№ 191 ԿԻՐԱԿԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 3

1906

ԿԻՐԱԿԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 3 № 191

ԵՐԵՍՈՒՆԶՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի. առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խաչատուր եւ Շուշանիկ Բասենցեանները յայտնում են ազգականներին, ծանօթներին և հանգուցեալի ընկերուհիներին, որ այսօր, կիրակի, սեպտեմբերի 3-ին իրանց անմոռանալի դստեր՝

ԱՆԱՀԻՏԻ

մահվան քառասունքի օրը Մէյդանի ս. Գէորգ եկեղեցում կը կատարվի հոգեհանգիստ։ Պատարագի սկիզբն է առաւօտեան ժամը 11-ին, իսկ հոգեհանգիստը սկսվելու է 12-ին։ 1—1

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

ԽԱԹԱԲԱԼԱ

Երգիծական-սատիրական շաբաթաթերթի բաժանորդագրութիւնը

Տարեկան գինն է Թիֆլիսում 4 ր., դուրսը՝ 5 ր., $^{1}/_{2}$ տարվայ գինն է Թիֆլիսում 2 ր., դուրսը՝ 2 ր. 50 կ., երեք ամսվանը 1 ր., դուրսը՝ 1 ր. 25 կ.։

Ծ ա ն.—Սկզբում, մտադրվելով «Խաթաբալան» երկու շաբաթը մի անգամ լոյս ընծայել, տարեկան գինը որոշել էինք 2 ր. և 2 ր. 50 կ.։ Բայց այժմ, քանի որ այն շաբաթաթերթ դարձրինք, այդ պատճառով էլ գինը կրկնապատկում ենք։

Մենք ընդունում ենք և զանազան յայտարարութիւններ ամեն լեզուներով։

Վաճառվում է գաւառական բոլոր հայաշատ քաղաքներում։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, редакція «Хатабала».

Շաբաթ, սեպտեմբերի 2-ին, լոյս տեսաւ № 13.

Խմբագիր-հրատարակող՝ Աստ. Երիցեան

(ու. կ.) առ. 2—2

ՆԱՒԹԱՅԻՆ ՊԱՀԵՍՏ

ՏԻՐԱՆ

Բագու. Տորգովայա փողոց տ. Մայիլեանի, հեռախօս № 826։

Մատչելի գներով առաջարկում է նաւթ, բենզին, իւղ, մազութ, գուդրօն, սմալայ և ուրիշ ամեն տեսակ նաւթային ապրանքներ, վագօնով և տակառով. օտար տեղերի պատուէրները կատարվում են ճշտութեամբ և արագ։

«ՏԻՐԱՆ»-ի գրասենեակն ընդունում է նաև կօմմիսիօներական յանձնարարութիւններ։

Հեռագիրների և նամակների հասցէն՝ Բագու «ՏԻՐԱՆ»։

3—10 (ե.հ.կ.) Յարգանօք Տիգրան Յով. Միքայէլեան

Ռուսաց Կայսերական Երաժշտական Ընկերութեան

ԵՐԱԺՇՏԱԳԷՏ

ԴԱՇՆԱԿԱՀԱՐ

ՅՈՎՍԷՓ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ

Նիկոլաեւսկայա փողոց, 40.

Ընդունելութիւնը և պարապմունքները ամբողջ տարի

Վճարը՝ իր մօտ 9 ր. ամսական, իսկ տներում հրաւիրվելով 9 ր. ժամը։

(ա. օր.) 8—8

(առ.)

ԳԻՄՆԱԶԻՍՏԿԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԳԻՇԵՐՕԹԻԿ

Վճարը ընդհանուրին մատչելի է։ Պրակտիկա ֆրանսերէն լեզուից, ցանկացողների համար — մուզիկա։ Աշակերտուհիների պատրաստելը մինչև 4-րդ դասատուն։ Առողջարար սարի օդ. հանգիստ տեղ։ Դավիդովսկի հրապարակ, տուն Գամրեկելի № 4, Մ. Երիստովային։ (հ. շ. կ.) առ. 3—3

ԴՊՐՈՑ

ԿԱՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ

Երկու սեռի մանուկների համար։ Ընդունելութիւնը սկսված է, ուսումը՝ սեպտեմբերի 6-ից. Բեհբութեան փող. սեփ. տ. 25։

(սեպ. 2, 3, 5, 6, 8, 10, 14, 17) 2—8

Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ

Յարմարեցրած ձայների համար

ԳԻՆԸ 20 ԿՈՊԷԿ

50-ով առնողին 20% զիջում։

Դիմել՝ Армавиръ (Кубан. обл.) Регенту С. Шаануяну.

առ. 3—5

ԴԱՇՆԱԿԱՀԱՐ ԵՐԱԺՇՏԱԳԷՏ

Ի. Մ. ՄԱՏԿՕՎՍԿԻ

Սեպտեմբերի 1-ից բացել է իր տանը դաշնակահարութեան կուրսեր, ուր աւանդվում են տեսական երաժշտութիւն եւ նուագ։ Աշակերտների ընդունելութիւնը շարունակվում է առ. 10—2 ժ. և 5—7 ժ. եր.։ Ուսմունքը սկսվել է սեպտեմբերի 1-ից։ Պայմանների մանրամասնութիւնները՝ Саперная ул., д. № 5, кв. И. М. Матковскаго.

առ. (ու.կ.ե.) 2—3

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ

Ս. Ջ. ԽԻՋԱՆԵԱՆՑ

Ընդունում է հիւանդներին առաջվայ պէս։ Սօլօլակ, Վելեամինօվսկայա փողոց № 14։

(և. հ. կ.) (առ.) 5—6

Վ. Վ. Զոհրաբեանի

ՁԵՌԱԳՈՐԾ-ԱՐՀԵՍՏԻ

Առաջին մասնաւոր ձրի ուսումնարանը գտնվում է Ֆրէյլինսկի փողոցում № 14։

առ. 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Օգոստոսի մէկը և սեպտեմբերի մէկը. Վերջին տեղեկութիւններ. Պաշտօնական. Շարժումներ և հետեւանքներ. Մամուլ. Հայոց Թատրօնը Թիֆլիսում. Վերջանում է թէ նոր է սկսվում. Մուսուլմանների համագումարը Նիժնի Նովգորոդում. Սալմաստի ուսուցչական միութեան հարցի առիթով. Մոռացված անկիւններ. Նամակ Կարսից. Նամակ Նոր-Բայազետից. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՕԳՈՍՏՈՍԻ ՄԷԿԸ ԵՒ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ՄԷԿԸ

Մեր առաջ դրած են «Մշակի» օգոստոսի 1-ի և «Զանգի» սեպտեմբերի 1-ի համարները։

Նրանք խօսում են մի շատ ժամանակակից հարցի մասին, որը յուզում է մեր հասարակութեան մտքերը։

Օգոստոսի 1-ի համարում «Մշակը» ասում էր «Զանգի» նախորդ «Ալիքին» թէ պէտք է մերկացնել այն սոսկալի չարիքները, որոնք վարագուրվել են ինքնապաշտպանութեան դրօշակով և կրծում ու մաշում են մեր ժողովրդական կեանքը։ «Մշակը» հրաւէր էր կարդում «Ալիքին» սթափվել, որովհետև երևոյթը չափազանց լուրջ է և մենք գործ ունենք հասարակական ցաւոտ խոցերի հետ։

«Մշակը» դիմելով «Ալիքի» ղեկավարներին ի միջի այլոց ասում էր հետևեալը.

Քաջութիւն ունեցէք դատապարտելու և բարոյական ձեր պարսաւանքը յայտնելու ռազմական այն գործողներին, որոնք թոյլ են տալիս իրանց կատարել զեղծումներ և չարագործութիւններ։

Ձեր այդպիսի դատապարտութեամբ դուք թէ պատժած կը լինէք մեղապարտին, թէ զգաստացրած կը լինէք նրա ընկերներին և թէ կարողութիւն տուած կը լինէք, որ ժողովրդի բողոքի և գանգատի ձայները հասնեն ձեր ականջին։

Ձեզ յիշեցնենք մի օրինակ։ Մի հինգ վեց տարի սրանից առաջ «Մշակի» էջերում երևացին Պարսկաստանից մի շարք թղթակցութիւններ այնտեղի ենիչերիների գործունէութեան մասին։

Ո՞վքեր էին ենիչերիները։

Քաղաքական կազմակերպութիւններին պատկանող անձեր, որոնք սկսել էին ի չարը գործ դնել իրանց հեղինակութիւնը և ֆիզիկական ոյժը նեղ, անձնական սոսր նպատակների համար։ Ժողովուրդը անուանեց նրանց ենիչերիներ։

Երևոյթը քստմնելի և վրդովեցնող էր։ Եւ չէր կարելի նրան թագցնել։

Մեր լրագիրը չը լռեց և հասարակական ախտը երևան հանեց։

Ձեր ներկայ աշխատակիցներից մէկը, որ այն ժամանակ «Մշակի» աշխատակից էր, Տիգրան Յովհաննիսեան, գրեց մի յատուկ յօդուած ենիչերիների գործունէութեան դէմ և ասաց ծանր խօսքեր։

Եւ «Մշակը» իր բռնած դիրքով, իր թղթակցութիւններով և Տ. Յ.-ի յօդուածով մի լաւ գործ կատարեց իր ժամանակին, որ սթափեցնող ազդեցութիւն ունեցաւ Պարսկաստանի իրականութեան վրա և զսպեց այնտեղ ստեղծված կամայականութիւնները։

Անցաւ ժամանակ, պարզվեցին նոր երևոյթներ։ Պարզվեց, որ ենիչերիներ կան նաև Անդրկովկասում։ Նրանց մասին գանգատներ լսվում են զանազան տեղերից։

Այո, նրանք գոյութիւն ունեն. այդ չէ կարելի ժխտել։ Այդ պէտք է ընդունել և ամեն ջանք գործ դնել նրանց հեռացնելու ու զսպելու թէ գործի մաքրութեան համար և թէ նրանց համար, որ ենիչերիների պատճառով չը մրոտվի և վարկաբեկ չը լինի նաև բազմաթիւ ազնիւ, անձնուէր, ոգեւորված և մաքուր գործողների պատիւը։

Ինչո՞ւ մէկ վատի պատճառով անուանարկվի հարիւր լաւը. ինչո՞ւ այդ վատը արմատախիլ չանվի, որպէսզի բոլորը մաքուր լինեն։

Իսկ եթէ դուք կուզենաք բացասել սևը ու դատապարտելին, ամեն բան սպիտակ հրատարակել և ամեն մի արդարացի ու ճշմարիտ ցուցում անուանել զրպարտութիւն ու թշնամութեան արտայայտութիւն, այն ժամանակ ինչո՞վ դուք կը զանազանվէք այն ռէակցիօնական գործողներից, որոնց վերաբերութեամբ աշխատում էք ձեր փրքուն և շինծու դարձուածներով այնքան վրդովմունք արտայայտել։

«Ալիքի» և «Զանգի» գործողները շարունակեցին իրանց բռնած դիրքը, լուրջ վերաբերմունք չը ցոյց տուին դէպի մեր յիշատակած երևոյթները և չըմբռնեցին այն չարիքների էութիւնը, որոնք այնքան խոցեր պատճառեցին մեր ժողովրդին։

Եւ նոյն Տ. Յ. իր վրա վերցրեց մի ուրիշ յանձնարարութիւն՝ զրուատումների մի հեղեղ ներկայացնել դաշնակցական գործողների հասցէին և լռութեան տալ այն չարիքները, որոնց մասին խօսում էինք մենք, թարգման լինելով ժողովրդին։

Ամբողջ մի ամիս մենք շարունակում էինք պնդել մեր ասածների վրա, ազգաբնակութիւնը ամեն տեղ, ամեն օր յայտնագործում էր իր տանջանքների նոր դէպքեր։ Վերջապէս կեանքի բողոքը սկսեց ստանալ բուռն դժգոհութեան բնաւորութիւն և խուլերը ու կոյրերը պէտք է լսէին ու տեսնէին այն, ինչ որ նրանք բացասում էին կամ աշխատում էին բացասել։

Եւ ահա մի ամբողջ ամիս անցնելուց յետոյ «Զանգը» խելքի է եկել և մի քանի չեմ ու չում»-ներ անելուց յետոյ՝ զետեղել է իր էջերում հետևեալը.

> Պատահական ու բախտախնդիր անհատներ «դաշնակցական զինուորի» անուան տակ կատարում են շահատակութիւններ, գործում են սխալներ և դրանով վարկաբեկ անում իսկական յեղափոխականներին, մաքուր ու գաղափարական զինուորներին։
>
> Հայ-թուրքական ընդհարումների արիւնոտ փոթորիկը և նրա առաջացրած ինքնապաշտպանութեան հրամայողական անհրաժեշտութիւնը խառնելով դաշնակցական զինուորների շարքերը, հասարակութեան որոշ շրջաններում առաջացրել են այն կարծիքը, թէ դրանք վարձկաններ են և ոչ գաղափարական գործիչներ, թէ դրանցից սպասելի են ամեն տեսակի արատներ՝ և բռնութիւն և յափշտակութիւն և զուլդուրութիւն և ենիչերութիւն։
>
> Կարծիքների այդ հոսանքի առաջն առնելու համար հէնց իրենք դաշնակցական զինուորները պէտք է աշխատեն բարձր պահել մաքրութեան ու գաղափարականութեան դրօշակը և հեռացնեն իրանց շարքերից այն բոլոր անհատներին, որոնք դաւաճանում են այդ դրօշակին, նսեմացնում են իսկական յեղափոխականի կոչումը։
>
> Նոյն երևոյթի վրա ուշադրութիւն պէտք է կենտրոնացնէ նաև ամբողջ կազմակերպութիւնը իր համապատասխան մարմինների միջոցով։
>
> Հէնց այդ նպատակով աւելի քան անհրաժեշտ է զատել անարժաններին արժանաւորներից, բախտախնդիր տարրերին բուն յեղափոխական զինուորներից։ Պարզ է, իհարկէ, որ այդ ուղղութեամբ ամենից շատ պէտք է աշխատեն հէնց իրանք իսկական դաշնակցական զինուորները։
>
> Այդ զատումը հարկաւոր է յանուն Հ. Յ. Դաշնակցութեան մաքուր դրօշակի, յանուն նրա փայփայած բարձր իդէալների, այդ իդէալների համար զոհված անգին նահատակների և դրանց ուղին շարունակող անձնազոհ հերոսների։

Ահա այդ տխուր երևոյթի, այդ չարիքների մասին էր «Մշակի» խօսքը ու բողոքը։

Դուք պէտք է ժամանակին ասէիք ձեր խօսքը և չը ժխտէիք այն, ինչ որ կազմում էր ժողովրդի ցաւն ու կսկիծը։

Եւ եթէ ձեր խօսքերը ասված լինէին այն ժամանակ և նրանից էլ վաղ, դուք որոշ դրական գործ կատարած կը լինէիք և առաջ չէր գայ այն վէրը, որ կազմվեց ձեր ու ժողովրդի մէջ։

Բայց «Զանգը» ցանկանալով, թէև ուշ, ուղղել մի հիմնական զանցառութիւն, դարձեալ չէ գիտակցում իւրեր դրութիւնը և յօդուածի շարունակութեան մէջ նա ցանկանում է հաշտեցնել այնպիսի բաներ, որոնք անհաշտելի են ներկայումս Դաշնակցութեան դրօշակի տակ գործողների համար։ Եւ միթէ դարձեալ նոր ամիսներ են հարկաւոր, որպէս զի պարզվի «Զանգի» գործողների համար, թէ չէ կարելի կուսակցութիւնը շինել մի մեծ խանութ, որտեղ ծախվում լինի ամեն բան, և ինքնապաշտպանութիւն, և հայկական հարց, և սօցիալիզմ, և բուրժուականութիւն և ամեն տեսակ ապրանք։

Ոչ, մոլորութիւնը և մոլորութեան մէջ յամառութիւնը դեռ չեն անցել։

Ա. Ք.

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Գորիս, սեպտեմբերի 2-ին

Այստեղ ազգաբնակութեան մէջ երևացել է բծաւոր տիֆ։ Եթէ անմիջական խիստ հսկողութիւն չը կատարվի, կարող է ախտը տարածվել և զոհեր տանել։

Օրդուբաթ, սեպտեմբերի 2-ին

Զանգեզուրի կողմից եկած թուրքերը նորերս փորձեցին վերադառնալ իրանց տեղերը, բայց ճանապարհները գտան փակ։ Զանգեզուրի գաւառի սահմանակից թէ հայերը և թէ թուրքերը կտրել են գիւղերի միջև հաղորդակցութիւնը և միմեանց խոչընդոտ են լինում երթևեկելու։

Զանգեզուրի տեղական վարչութիւնը դեռ չէ կարողացել հաստատել խաղաղութիւն Սիսիանում և Ղափանում։

Շուշի, օգոստոսի 30-ին

Քաղաքիս հարաւային մասում գտնվող «Գեօհար-աղայի» դիրքը բռնած ունեն ռուս զինուորները։

Օգոստոսի 29-ին, լոյս 30-ի գիշերը, թուրքերից մի խումբ գաղտագողի մօտենում է այդ դիրքին՝ զինուորներից հրացաններ գողանալու մտքով։ Զինուորները նկատելով թուրքերին, սկսում են հրացան արձակել վերջիններիս վրա։ Թուրքերն էլ իրանց կողմից նոյնպէս հրացան են արձակում զինուորների վրա։ Հրացանաձգութեան ժամանակ թուրքերից սպանվում է 2 հոգի և վիրաւորվում՝ 1։ Զինուորներից ոչ ոք չէ վնասվել։

X

Շուեդիայի Ստոկհոլմ քաղաքից մեզ հաղորդում են, որ Ա. Ամիրխանեան վերջին ժամանակներս շաբաթական 5—6 անգամ առենախօսութիւններ էր անում այդ քաղաքում և շուեդացիներին ծանօթացնում Կովկասում կատարվող դէպքերի հետ։ Ի միջի այլոց նա իր առենախօսութեան մէջ խօսել է Գանձակի գեներալ-նահանգապետ Ալիխանովի մասին, քաղելով տեղեկութիւններ «Մշակից», ի նկատի ունենալով, որ Ալիխանովը ֆինլանդացի լինելով, շուեդները և ֆինները դժգոհ են նրա բռնած ընթացքից։ Գերմանական «Sonnenaufgang» ամսաթերթում տպված է նոյն Ամիրխանեանի մի երկար յօդուածը ի պաշտպանութիւն Կովկասի հայերի։ Ամիրխանեան անցնելով Ստոկհոլմից Գերմանիա, մտադիր է այնտեղ ևս դասախօսութիւններ կարդալ։

Գանձակ, 1 սեպտեմբերի

Մեր դրացի թուրքերից անհանգիստ հոգիները երբեմն-երբեմն անցնում են հայոց թաղի մութ անկիւնները, ըստ երևոյթին՝ մարդկային որս անելու։ Երէկ, առաւօտեան ժամի մօտ 10-ին, դերձակ Միքայէլ Բաղդասարեանը Զայլու փողոցով անցնելիս, մօտակայ բակի դռանը կանգնած մի հայ կին յայտնում է, որ ինքը վախում է ոչ այնքան հեռու կանգնած թուրքերից»։ Խեղճ արհեստաւորը դէպի յետ, մի քանի քայլ չարած, երկու թուրքեր մէկը զինված փայտով միւսը դաշոյնով թափված են Բաղդասարեանի վրա, փայտի մի քանի հարուածներով ծանրապէս վէրքեր հասցնում գլխին և ձեռքին, ապա ուզում են բռնել Բաղդասարեանին, սրան աջողվում է փախչել արիւնաշաղախ և գանգատվել երկրորդ մասի պրիստաւին։ Աւելորդ եմ համարում առաջ բերել յարձակվողների հասցէին ուղղած այն սպառնալիքները, որոնք ուղղակի սովորական կերպարանք են ստացել...

Սազան

«Իրշադ»-ի սեփական թղթակիցը Աղդամից հեռագրում է հետևեալը.

«Խաղաղարար կօմիսիան մօտ է գալիս գիւղերում։ Թէ հայ և թէ թուրք ցրված գիւղացիութիւնը ցանկանում է ամեն տեղ վերադառնալ իր տեղը։ Սակայն հայերի մէջ այն կուսակցութիւնը, որ ցոյց է տալիս պատերազմական տրամադրութիւն, հակառակ է այդ ցանկութեան իրականացման։ Այդ կուսակցութեան թշնամի մի ուրիշ հայ կուսակցութիւն գիւղացիների իրանց գիւղերը վերադառնալու կողմնակից է և այդ պատճառով մրցում, կռւում է առաջինի դէմ։ Խաղաղութիւնը կարող է տիրապետել միայն այն դէպքում, երբ ցրված գիւղացիութիւնը կը վերադառնայ իր տեղը»։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

Թիֆլիս քաղաքի և Թիֆլիսի նահանգի ժամանակաւոր գեն.-նահանգապետի կարգադրութիւնը։

Յայտարարութիւն

Յայտարարում եմ ի գիտութիւն ընդհանուրի, որ սոյն սեպտեմբերի 2-ին Թիֆլիսի ոստիկանապետի դիւանատան կից բացվում է հասցէների սեղան (адресный столъ), իմ պարտադիր որոշումների համաձայն, որոնք հրատարակվել են ի գիտութիւն ընդհանուրի «Кавказъ» լրագրի № 87-ում. ուստի Թիֆլիս քաղաքի անշարժ կայքի սեփականատէրերին մի շաբաթ ժամանակ է տրվում յիշեալ վարչութիւնից վերցնելու դրա համար սահմանված տնային գրքերը, որից յետոյ այն տնատէրերը, որոնք կը նկատվեն, որ այդպիսի գրքեր չունեն կամ չեն կատարել իմ որոշումները, կենթարկվեն նրանց մէջ յիշված ադմինիստրատիվ պատիժներին, այսինքն երեք ամսվայ բանտարկութեան կամ 3000 րուբլի դրամական տուգանքի։

Միևնոյն ժամանակ հարկաւոր եմ համարում Թիֆլիս քաղաքի ազգաբնակութեան առանձին ուշադրութիւնը հրաւիրել հասցէների սեղանի մասին կայացրած որոշումների 9-րդ կէտի վրա, որի հիման վրա այն տնատէրերը կամ բնակարանատէրերը, որոնց բնակարանում կը գտնվեն դատաստանական կամ ոստիկանական իշխանութեան որոնած յեղափոխական կամ տերրօրիստների կուսակցութեանը պատկանող անձնաւորութիւններ, բացի վերոյիշեալ ադմինիստրատիվ տուգանքից, իմ կողմից կարտաքսվեն, իբրև հասարակութեան համար վտանգաւոր մարդիկ, իմ գեներալ-նահանգապետութեան սահմաններից։

Ժամ. գեն.-նահանգապետ՝ գեն. Տիմոֆեյեվ

1 սեպտեմբերի 1906 թ.։

ՇԱՐԺՈՒՄՆԵՐ ԵՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ

—«Volkszietung» լրագրի թղթակիցը հաղորդում է Մօգիլեւի նահանգի Տօլօչինա աւանից հետևեալը. «Անցեալ տարի տեղական գիւղացիները հրաժարվեցին վճարել հարկերը և, ուշադրութիւն չը դարձնելով համոզիչ խորհուրդների ու սպառնալիքների վրա, մինչև այժմ էլ չեն վճարում հասանելիք հարկերը։ Մօտ ժամանակներս ոստիկանութիւնը ցուցակագրում է գիւղացիների գոյքը և աճուրդ նշանակում օգոստոսի 9-ին։ Յուլիսի 31-ին գիւղացիների պատգամաւորութիւնը Տօլօչինա է գալիս որոնելով «Բունդի» անդամներից մէկին, գիւղացիների կողմից խնդրում է նրան բացատրել հրէայ ազգաբնակութեանը գիւղացիների գոյքի առաջիկայ աճուրդի նշանակութիւնը և առաջարկել հրէաներին բօյկօտի ենթարկել աճուրդը։ «Բունդը» աճուրդի դէմ բօյկօտ յայտարարեց, և ոստիկանութիւնը, գիւղացիների գոյքը առնող չը լինելու պատճառով, ստիպված էր աճուրդը յետաձգել»։

—«Р. Т.» լրագրին հաղորդում են Ասխաբադից, որ կրամօլան, այնտեղ բոյն դնելով բանուորների մէջ, տարածվել է համարեա տեղական ամբողջ զօրքի մէջ և խոր արմատներ արձակել։ Յաճախակի գումարվում են զինուորների ժողովներ և միտինգներ, ուր առհասարակ քննում են օրվայ ցաւագար հարցերը՝ գլխաւորապէս քաղաքական բնաւորութիւն ունեցող։ Զինուորների մէջ լայն ծաւալ ստացած այդ կրամօլան խիստ երկիւղ է պատճառում զինուորական իշխանութեանը, որ միջոցներ չունի կրամօլան զինուորների միջից արմատախիլ անելու։ Մօտ օրերս այնտեղ կայացել է զինուորների միտինգ, որին ներկայ են եղել տեղական համարեա բոլոր զօրամասերի զինուորները։ Ճառեր են արտասանել զինուորները Դումայի արձակման, վերջին անցքերի և օրվայ տաքտիկայի մասին։ Իշխանութիւնը տեղեկանալով այդ մասին, կազակներ ուղարկեց ցրելու ժողովը, բայց զինուորները, նախազգուշացված լինելով, ցրվում են՝ յեղափոխական երգեր և մարսելիէզաներ երգելով։

—Վարշավայից հաղորդում են «Страна» լրագրին, որ զինուորական-դաշտային դատարաններ մտցնելը ոչ մի ներգործութիւն չէ ունեցել տեղական յեղափոխականների վրա, որոնք շարունակում են կատարել իրանց կողոպուտներն ու սպանութիւնները։ Վերջին ժամանակներս մի օրվայ մէջ կատարվել է երեք սպանութեան դէպք և կողոպուտներ փողոցում։ Չարագործները, առաջվայ նման, անյայտացել են։

—Ոստիկանական դեպարտամենտի տեղեկութիւններին նայելով, Նիժեգօրոդեան տօնավաճառի ամբողջ շրջանում ներկայումս անընդհատ կատարվում են յարձակումներ, կողոպուտներ, աւազակութիւններ և այլն։

Ոստիկանութիւնը, չը նայելով իրան տրված լիազօրութիւններին ու բազմաթիւ օգնական զօրամասերին, այնուամենայնիւ չէ կարողանում վերականգնել կարգը։ Շատ բան թագցնում են նոյն իսկ, որպէս զի գործի համար տօնավաճառ եկողներին չը վախեցնեն։

ՄԱՄՈՒԼ

Էջմիածնի համագումարը դարձել է նաև տեղական ռուս մամուլի քննութեան առարկայ։ «Кавказъ» լրագիրը իր № 194-ում մի ամբողջ թերթօն նուիրեց այդ ժողովին։ Համարելով այդ ժողովը մի խոշոր երևոյթ հայկական կեանքի մէջ, նա ասում է, որ այդ երևոյթը երկու տեսակ տպաւորութիւն թողեց հայ հասարակութեան վրա։ Դժբախտաբար, ինչպէս երևում է յօդուածագիրը իր նիւթը քաղել է միակողմանի, տեղեկութիւններ վերցնելով միայն «Զանգ» թերթից, և հարկ չէ համարել ստուգել իրողութիւնները և միւս թերթերի գրածներով։ Եւ այդ է պատճառ, որ նա կրկնում է «Զանգի» ինսինուացիան, թէ ընդդիմադիր փոքրամասնութիւնը կազմված էր կղերականներից, լիբերալներից և պրօգրէսիստներից։

Նկարագրելով այն պայքարը, որ մղվեց ժողովում մեծամասնութեան և ընդդիմադիր—փոքրամասնութեան մէջ, որի հետ արդէն ծանօթ են «Մշակի» ընթերցողները, ռուս թերթը առաջ է բերում և «Նոր-Դար» լրագրի կարծիքը, որ ողբալով հայ եկեղեցու և ժողովրդի վիճակը մի քանի օր առաջ լոյս տեսած մի համարի մէջ, յայտնում է, թէ երբեք հայերը և նրանց ազգային հաստատութիւնները չեն ենթարկվել այնպիսի մեծ վտանգի, ինչպէս այժմ, և գոչում է՝ «Հայեր, ինչ էք քնել, արթնացէք. Էջմիածինը իր աթոռով և կաթողիկոսով ընկել է յեղափոխութեան ձեռքը»։

Այդ կարծիքները առաջ բերելուց յետոյ, ռուս պաշտօնական թերթը հետևեալ եզրակացութիւնն է անում.

«Վերոյիշեալ քաղուածները տալիս են լիակատար պատկերը այն կուսակցական կռւի, որ բորբոքվել է և ճարակել հասարակութեան բոլոր խաւերի հայերին։ Նրանք վառ ապացոյց են այն ջղային լարման, որին հասել է այդ կռիւը։ Կարող է՞ այդ կռիւը որևէ դրական հետևանք տալ։ Խոստանո՞ւմ է նա հայ ժողովրդին գոնէ մի փոքր ուրախալի և մխիթարական բան։ Ըստ ամենայն հաւանութեան—ոչ։ Նեղ, կուսակցական շահերը կուրացրել և մթագնացրել են պարզ դատողութիւնը, անդամալուծելով անաչառ և օբեկտիվ վերաբերմունքը դէպի գործը։ Երբեք հայերի քաղաքական կուրութիւնը չարտայայտվեց այնպիսի շօշափելի ձևով, ինչպէս այժմ։ Ամենից շատ և ամենից առաջ կը վնասվի այն ժողովուրդը, որի շահերի և բարեկեցութեան անունով մղվում է այդ կռիւը։ Շատ լաւ արդարանում են անմահ Նուբար փաշայի խօսքերը. «Մի հայ արժէ տասն եւրոպացու,—տասն հայեր չարժեն մի եւրոպացու»։

*

«Тифл. Листокъ» լրագիրն ևս մի առաջնորդող յօդուած նուիրեց, բայց ոչ այնքան համագումարին, այլ նրա առիթով այն հեռագրին, որ համագումարի մի քանի պատգամաւորներ, դաշնակցականներ, ուղարկել էին այդ լրագրին, մեղադրելով, թէ «Մշակի» մէջ տպված Հ. Առաքելեանի թղթակցութիւնները այդ համագումարի մասին միտումնաւոր են և պրօվօկացիօնական։ Տպելով դաշնակցական պատգամաւորների այդ հեռագիրները լրագիրը ասում է. «Այդ հեռագիրների հեղինակները ոչ մի ցուցմունք ի հաստատութիւն իրանց մեղադրանքի չեն բերում։ Եւ եթէ մենք տպում ենք այդ հեռագիրները, միայն այն բացարձակ նպատակով, որ հնարաւորութիւն տանք պ. Առաքելեանին մամուլի միջոցով պատասխանել այդ ծանր մեղադրանքներին...։ Առաքելեանի ամբաստանողները, ի հարկէ, պէտք է ցոյց տան ճշգրիտ և որոշ կերպով, թէ ինչ խօսքերի և թղթակցութիւնների մէջ նրանք տեսնում են տենդենցիօզութիւն և պրօվօկատօրութիւն։ Դատաւոր կարող են լինել ոչ թէ պ. Թոփչեանը և հեռագիր ստորագրողները, այլ ընթերցողները, որոնց նրանք դիմում են իրանց բողոքով»։

Գալով ժողովում յարուցված հարցերին և մասնաւորապէս եկեղեցու բաժանման հարցին, ռուս թերթը ասում է.

«Հայերը ցրված են ամբողջ աշխարհի երեսին և եթէ որ և է տեղ նրանք փոքր ի շատէ համախմբված են ապրում, դա էլ փոքր օազիսներով, բայց ամենքին միացնում է մի ընտանիքի, մի համայնքի մէջ—եկեղեցին և կրօնը։

«Մենք համոզուած ենք, որ հայ գիւղացիութիւնը, որը իրաւունք ունի ասել վերջին խօսքը այդ հարցում, չի ընդունի գործադրութեան համար ժողովի որոշումները, եթէ նրանք ծառայեն իբրև սկիզբն եկեղեցու բաժանման։ Վերջապէս, հայ-եկեղեցական կալուածների խնդրի մասին անհրաժեշտ է լսել նաև Թիւրքիայի, Պարսկաստանի և այլ երկիրների հայերի կարծիքը, որովհետև այդ կալուածները կազմում են բոլոր հայերի, և ոչ միայն ռուսահայերի սեփականութիւնը։

«Դեռ չէ հասել ժամանակը այդպիսի արմատական յեղաշրջումն կատարելու հայ ժողովրդի կեանքի մէջ։ Դեռ շատ ժամանակ է հարկաւոր, որպէս զի հայ ժողովուրդը տաբուբերվի կուլտուրայի և քաղաքակրթութեան ուղու վրա, երբ այդ հարցերը կը լուծվեն ինքն իրանց, առանց բռնութեան և ճնշման...»։

*

Նոյն «Тифл. Листокъ» թերթի № 188-ում տպված է պ. Հ. Առաքելեանի բացատրութիւնը դաշնակցական պատգամաւորների ամբաստանութեան դէմ։ Նկարագրելով այն շարժառիթները, որոնք ստիպել են իր հակառակորդներին արշաւանք սկսել իր դէմ և դիմել այդպիսի սուտ զրպարտութեան, նա յայտնում է, որ իր բոլոր գրածները համագումարի և այդտեղ արտասանված ճառերի մասին անպայման համապատասխանում են ճշմարտութեան և հաստատութիւն են գտնում ոչ միայն «Զանգում» տպվածի, այլ և ուրիշ թղթակիցների սղագրական հաշիւների մէջ։ Սակայն որովհետև ամբաստանիչները ոչ մի ցուցմունք և փաստ առաջ չեն բերում, թէ որ թղթակցութիւնը կամ որ խօսքերն են նրանք համարում տենդենցիօզ և պրօվօկացիօնական, ուստի Հ. Առաքելեան առաջարկում է, որ իր զրպարտիչները ցոյց տան որոշ և մէկին կերպով իրանց մեղադրանքը և նա պատրաստ է ապացուցանելու այդ մեղադրանքի անհիմնաւորութիւնը և անբարեխղճութիւնը։

*

«Համառուսական մուսուլմանական համագումարի» որոշումը գեներալ Գօլօշչապօվի բռնած ընթացքի մասին, որ հաղորդվեց անցեալ օր «Մշակում», «Тифл. Листокъ» լրագրի մէջ առաջացրել է բողոք։ Լրագիրը անպայման սուտութիւն է համարում գեներալ Գօլօշչապօվի մասին գրվածը, քանի որ, ասում է նա, այդ գեներալը յայտնի է իր անաչառութեամբ և կոռեկտութեամբ։ Մենք հաստատում ենք և կապացուցանենք—շարունակում է նա—որ գեներալ Գօլօշչապօվի գեներալ-նահանգապետութեան ամբողջ ընթացքում ոչ Շուշում, ոչ գաւառներում չէ եղել ոչ մի «տմարդի վարմունք մուսուլմանների հետ առանց սեռի և հասակի խտրութեան, չէ եղել նրանց տների, գոյքի և տաւարի ոչնչացումը, մզկիթների պղծումը»։

*

Երբ մեր լրագիրը շարունակ պնդում էր, թէ Դաշնակցութիւնը, իբրև քաղաքական կուսակցութիւն, չունի որոշ ծրագիր, որոշ դաւանանք, որ նա զանազան խառնափնթոր հայեացքների մի կօնգլօմերատ է, մեզ առարկում էին, թէ ճիշտ չէ, թէ նա զուտ սօցիալիստական կազմակերպութիւն է։ Դժբախտաբար թէ բարեբախտաբար «Զանգ» լրագիրը գալիս է հաստատելու մեր ասածը։ Այդ լրագրի № 16-ի մէջ տպված են երկու յօդուածներ. մէկը՝ «Փէտիշը» վերնագրով, Մ. Յ.-ի, ուր յօդուածագիրը ուղղակի խոստովանում է, որ Դաշնակցութիւնը անխտիր ընդունում է և վեղարաւորին, և բուրժուային, միայն թէ նրանք ընդունեն Դաշնակցութեան ծրագիրը, և ամենևին չէ խոկում ունենալ իր շարքերում վեղարաւորին ու բուրժուային։ Միւս յօդուածի մէջ, Ե. Թ. այլ խոստովանութիւն է անում. նա ասում է, որ Դաշնակցութիւնը, ճիշտ է, ունի իր շարքերում անմաքուր տարրեր, ինքնակոչ դաշնակցականների մի ամբողջ մասսա, որոնց նա ստիպված է եղել ընդունել սև և մութ օրերին, բայց նա այժմ մտածում է մաքրվել, զատվել այդ պատահական և բախտախնդիր տարրերից։

*

Խօսելով «Մշակի» և «Մուրճի» մէջ տպված և Թիւրքա-հայերի դատին նուիրված յօդուածների մասին, «Արաքս» թերթը № 43-ի մէջ հետևեալն է գրում.

Վերջին ժամանակներս Կովկասի հայ մամուլը ազատուելով մի փոքր ցենզուրի ճանկերից, սկսեց կրկին ուշադրութիւն դարձնել Տաճկահայոց հարցի վրա։

«Մշակ»-ի երկու համարներում (137, 138) և «Մուրճ»ի Յուլիս գրքոյկում այդ հարցին նուիրուած են լուրջ յօդուածներ, որոնց վրա ես ուզում եմ դարձնել «Արաքս»-ի ընթերցողների ուշադրութիւնը։

«Ի՞նչ ելք պէտք է գտնել, ինչ միջոց պէտք է որոնել վերջապէս մի փոքր ամոքելու Օսմանեան բազմատանջ հայերի ցաւերը և ստեղծելու նրանց համար փոքր ի շատէ մարդավայել կեանք», հարցնում է պ. Հ. Առաքելեան «Մշակ»-ում և երկար խորհրդածութիւններից յետոյ գալիս է հետևեալ հետաքրքիր եզրակացութեան. «Համաձայնութիւն և համերաշխ գործակցութիւն հայ և օսմանեան բարեկարգիչ խաւերի մէջ, դա է ներկայումս միակ հնարաւոր միջոցը»։ Նոյն միտքն է յայտնում և «Մուրճ» ամսագիրը, հրաւիրելով Թրքահայերին «Նոր ճանապարհ ընտրել» և յարգելի պ. Լ. Ս. ցոյց է տալիս այդ «նոր ճանապարհը»՝ միանալ հայ և թուրք սօցիալիստներին և միահամուռ ոյժով կռուել տաճկական ռեժիմի դէմ։ «Հանգամանքները, ասում է յարգելի Լ. Ս.-ը, ժամանակի հետ փոխուելով, պէտք է փոխուի և գործելու եղանակը։ Անցեալը շատ բան պարզեց մեզ, շատ փորձանքներ անցան մեր գլխով»։

Ինչպէս տեսնում էք, երկու օրգաններն էլ գալիս են հետևեալ եզրակացութեան. մենք՝ հայերս միայնակ, մեր ոյժով անկարող ենք ազատուել Սուլթան Համիտի լըծից... և այս պարզ եզրակացութեան հասնելու համար, կարօտ էին հարիւր հազարաւոր դիակներ և Տաճկա-Հայաստանի գրեթէ կորստեան անդունդը հասնելը։

Այո, անցեալը շատ բան պարզեց մեզ, շատ փորձանքներ անցան մեր գլխով։

Միայն այդ «Անցեալը» մի բան դեռ չը պարզեց, որ դեռ տասնեակ տարիներ առաջ տաճկահայերին իբր երիտասարդութեան նուիրած, իր ամենալաւ ոյժերն իր հայրենիքին զոհ բերած մարդը, երբ առաջին անգամ Եւրոպայում սկսեց հրատարակել հայոց գործին նուիրուած թերթը, այն պարզ միտքն էր յայտնում, ու ասում էր՝ մենք առանց ամբողջ ժողովրդի պատրաստութեան և մեզ նպաստաւոր հանգամանքների անզօր ենք կռուել, որքան էլ թոյլ, բայց մեզ հետ համեմատած անչափ զօրեղ տէրութեան դէմ...

Ընթերցողը գուշակեց, որ իմ խօսքս պ. Փօրթուգալեանի և նրա «Արմէնիա»-ի մասին է։

Այդ մտքերը յայտնելու օրերից շատ ժամանակներ և «շատ փորձանքներ անցան մեր գլխով»։ Հանդէս եկան նոր կուսակցութիւններ, նոր կազմակերպութիւններ, որոնք արհամարհանքով ասպարէզից սկսեցին հալածել այդ ուղղութեամբ գործողներին։ Մէջ տեղ ընկան և սօցիալիստներ, հնչակներ, տէրրօրիստներ, մի խօսքով այն ամեն կարգի «յեղափոխականներ», որոնց երբեւէ Եւրոպան ստեղծել է... միայն մի փոքր հայկական բուրժուէնքով... և սկսեց Թրքահայերի ազատութեան գործը մեծ քայլերով առաջ գնալ։

Ես չեմ իմանում «Մուրճ»-ի պ. յօդուածագիրը ինչ հանգամանքների փոխուելու մասին է խօսում։ Արդեօք այն, որ տաճկահայերը այնքան կոտորուեցին, որ էլ քիչ ոյժ մնաց թշնամուն դէմ կռուելու, թէ այս վերջինս աւելի զօրեղացաւ։ Թէ իբր աչքի առաջ ունի Թուրքիայի տնտեսական կեանքի փոփոխութիւնը։

Միակ փոփոխութիւն, որ կրեց Տաճկահայաստանը այն օրերից, երբ «Մուրճ»-ի ներկայ յարգելի յօդուածագիրը կատարեց իր հռչակաւոր ճանապարհորդութիւնը դէպի Երզրում. և այսօր՝ դա հայերի մեծ կոտորածներն են. բայց հաւատացնում եմ յարգելի պ. Ս.-ին, որ այն ժամանակներն էլ, այսինքն գրեթէ երկու տասնեակ տարիներ առաջ, երկու կռւող ոյժերի համեմատութիւնը նոյնն էր և ամեն փոքր ի շատէ երկրին ծանօթ հայ շատ լաւ տեսնում էր որ տարիների ընթացքում ստրկութեան լծի տակ ճնշուած աղքատ փոքրաթիւ ժողովուրդ առանց ամբողջապէս պատրաստուելու և սպասելու նպաստաւոր օրերի անկարող է մի կազմակերպուած տէրութեան դէմ կռուել։

Բայց վա՜յ եկել էր այս տեսակ մտքեր յայտնողին։ Ես յիշում եմ ինչ հայհոյանքներ թափեցին պ. Փօրթուգալեանի գլխին, երբ նա համարձակուեց «Արմէնիա»-ի մէջ քննադատել, հիմնուած այս պարզ ճշմարտութեան վրա, հնչակեանների և դաշնակցականների գործունէութեան եղանակները։

Այն ժամանակներ բաւական էին եւրոպական, մանաւանդ ռուս յեղափոխականների ծրագիրները, մի փոքր էլ բուլղարական հայդուկների գործունէութեան հետ ծանօթ լինելը և շտապել Հայաստանն ազատելու եթէ ոչ սուլթանի լծից, գոնէ հայերից...

Ժամանակները փոխվում են, միայն մի բան մնում է, դա այն պարզ ճշմարտութիւնն է, որ ասում է. եթէ ուզում ես մի ժողովրդի մէջ գործել, պէտք է լաւ ծանօթ լինես նրա կեանքի բոլոր պայմաններին և նրանց ուսումնասիրութեան վրա հիմնել գործունէութեան ծրագիր։ Ահա այս պարզ ճշմարտութիւնը մոռացել էին «այն կազմակերպութիւններն, որոնք ստեղծվել էին յաւակալէս այդ դատի պաշտպանութեան համար»։

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Հայ դրամատիկ ընկերութեան խմբի ներկայացումները կը սկսվեն հոկտեմբերի 2 ից։ Շաբաթը մի ներկայացում արտիստիկ. ընկերութեան թատրոնում (երկուշաբթի), ժողովարանում (հինգշաբթի) և Հաւլաբարի թատրոնում (ամիսը 2 կիրակիներ և շաբաթ օրեր)։

Խմբի անդամներն են. տ. տ. Մայսուրեան, Վարդուհի, Աւետեան, Զարիֆեան, Ալմա Սաֆրազեան, Նոնիկեան, օր. Էրթեան (ռուսաց խմբից)։

Աշակերտուհիներ՝ օր. օր. Յակոբեան, Մուրադեան, տ. Աստղիկ, պ. պ. Աբէլեան, Զարիֆեան, Յարութիւնեան, Աւետեան, Արաքսեան, Աղայեան, Թաշճեան, Ադէլխանեան, Եղիազարեան, Շահխաթունեան, Ալաբէկեան, Մանուէլեան (բանակցում են)։ Աշակերտներ. պ. պ. Բէժանեան, Տէր-Յարութիւնեան, Խաչիկեան, Տէր-Յակոբեան, Ահարոնեան։

Աշակերտներ և աշակերտուհիներ էլի ընդունվում են։

Բարեհաճ համաձայնութիւն են տուել՝ պ. Գ. Բաշինջաղեան հետևել դեկօրացիաներին, պ. Գր. Վանցեան—լեզուի գեղեցկութեան և երևի պ. Միրզոյեան երաժշտական մասի։ Այն պիէսները, որոնք մինչև այժմ չէին թոյլատրվում, արդէն թոյլատրված են. «Ֆիէսկօյի դաւադրութիւնը» հասարակապետական ողբերգութիւն Շիլլերի, «Հայրենիք» (վրայ Շամշոյլօ) Սարդուի, «Արտաւազդ», ֆիերքա երգերով, պարերով և էլէկտրական էֆֆէկներով Յարութիւն Թումանեանի։ Ռեպերտուարի մէջ են. «Սալոմէ», Օսկար Ուայլդի, «Հրէաներ» Չիրիկովի, «Ժան Բուլ» Օկտաւ Միրբոյի, «Բար» Փրինեւսկայի և ուրիշներ...

Գլխաւոր ռեժիսոր հրաւիրված է պ. Աբէլեան, առաջին օգնական պ. Աւետեան և երկրորդ օգնական պ. Աբովեան։

ՎԵՐՋԱՆՈ՞ՒՄ Է, ԹԷ՞ ՆՈՐ Է ՍԿՍՎՈՒՄ

Անսանձ, երես առած թուրք խուժանի ձեռքով վերջին շաբաթներս Արէշում տեղի ունեցած սարսափ ազդող, սրտաճմլիկ անցքերն ու պատճառները գալիս են մի անգամ ևս ապացուցանելու, որ այդ ազգը, երբ զգում է իր դիմացինի անզօրութիւնը, անպատժ և անպաշտպան վիճակը, մանաւանդ երբ վստահ է, որ իր արած գազանութիւնների համար պատասխանատուութեան չը պիտի ենթարկվի, վերին աստիճանի անզուսպ է և անտանելի։

Թէպէտ «Մշակի» մէջ լոյս չէ տեսել, սակայն իր ժամանակին ես անփոյթ չեմ եղել նկարագրելու ա) Արէշում անղուգական հեղինակութիւն և դիրք վայելող հաւարիկեցի Գրիգոր Պետրոսեանին իր բակում գնդակահար անելը և մահացնելը, բ) պրիստաւ Իսմայիլ-բէկի հետ հաշտարար միջնորդ Պիվօվարօվը, արէշցոց համար իբրև նպաստ պետական գանձարանից բաց թողած 2000 րուբլին առանց գիւղացիներին բաժանելու, ստացման համար վաւերացրած դօկումէնտներ կորզելը, գ) պրիստաւ Իսմայիլ-բէկի՝ նեմեծապատեցիներին մորակահար անելով, տանուտէր Խաչատուր Մարտիրոսեանին պաշտօնազրկել տալը, մերձ ի մահ ծեծելով գիւղացիներին կրկին իրանց տեղը յետ տալը, երբ նրանք տեսնելով իրանց անպաշտպան լինելը կամենում էին գաղթել Գանձակի նորահիմն կորիւնապատ գիւղը, դ) օրը կէսօրին հաւարիկեցիներ Ուսկիմ Առաքելեանի գոմէշների խլելը, Աթասի Բուշչիկեանին և Հայրապետ Աւետիքեանին կողոպտելը և այլն և այլն։

Սակայն այսօրվայ դէպքը գալիս է մեզ համոզելու, որ մեզ վրա հասած այդ բոլոր աղէտները ու զրկանքները լոկ կոհակներն են այն սարսափելի փոթորիկի, որի անարկու գոյութիւնը աննկատելի և անտեսանելի է մեր ամեն ինչի մէջ միշտ բարին տեսնող աչքերից։

Օգոստոսի 22-ին, երեկոյեան ժամը 4-ին մի սուսար թիւց քաղկացած հրոսակախումբ յարձակումն է գործում նեմեծապատեցիների օթևանների վրա։ Երկուստէք հրացանաձգութիւնը տևում է կէս ժամ, որից յետոյ անզօր ու անպաշտպան նեմեծապատեցիք անձնատուր են լինում։ Գնդակի, մորակի և սարսափի տակ ահաբեկված ժողովրդից խլում են նրա ամբողջ կարողութիւնը—մինչև վերջին կօպէկը, կանացի զարդարանքները և լաւ ձիերը։ Տարած միայն փողերի գումարը հասնում է 1200 րուբլու։

Այս չորրորդ անգամն է ինչ խեղճ նեմեծապատեցիք ենթարկվում են յարձակումների և կողոպուտների։ Սկսած 1905 տարվայ օգոստոս ամսից, առաջին անգամ քշել են դրանց նախիրը, երկրորդ անգամ ձիերը, իսկ երրորդ անգամ արդէն մերկանդամ, մազապուրծ Ղայբաշի ապաստանին էր։ Այժմ խեղճ գիւղացիք իրանց այրված տան ու դէպի մոխիրի վրա ծուատելով կամենում են վշտերի ներքոյ կորացած մէջքով տանել իրանց ծովացած անվերջ ցաւերը, բայց այդ էլ չեն թողնում, այդ էլ շատ են համարում նրանց և գալիս խլում են նրանց ձեռքի վերջին կօպէկները և կանացի զարդարանքները։

Հետաքրքրելի է թէ ինչ է մտածում նեմեծապատեցիներին մորակով գիւղը յետ դարձնող պրիստաւը. խղճահարվում է, թէ՞ զուարճանում. գուցէ հէնց դրա համար էլ յետ էր դարձրել գիւղացոց ամեն ինչ սպասելի է...

Սիրազդեան

ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴՈՒՄ

Որպիսի զուգադիպութիւն... հէնց միաժամանակ՝ մեզ համար այնքան մեծ նշանակութիւն ունեցող Էջմիածնում ռուսահայերիս կենտրօնական պատգամաւորական ժողովի բացման հետ՝ բացվում է այստեղ, Ն.-Նովգօրօդում, մուսուլմանների համաժողովը, որը անշուշտ կունենայ շատ մեծ ազդեցութիւն թուրք ժողովրդի մտաւոր վերածնութեան վերաբերմամբ։ Կարծես այստեղ ես ճակատագիրը կապել է մեզ, երկու հարևան ազգերիս, որոնց սակայն դարաւոր սերտ յարաբերութիւնը այժմ մնում ռէժիմի ազդեցութեան տակ խախտված է։

Շատ վաղուց է, որ թուրքերը մի ընդհանուր համագումարի կարիք էին զգում, որովհետև նրանց առջև կային դրված զանազան դպրոցական, եկեղեցական և այլ հարցեր, հարցեր՝ որոնք մեր ներկայ հետաքրքիր օրերում անշուշտ պահանջում էին իրանց արդարացի լուծումը և այդ առիթով նրանք ունեցել են վերջին տարիներս երկու ոչ պաշտօնական համագումարներ, որոնք սակայն մասամբ քաղաքական գոյն ունենալու պատճառով չեն վերլել կառավարութեան աչքից։ Եւ ահա այսօր, երբ թուրք ժողովուրդը ևս ոտք է դրել ներկայ ազատարար լայն ճանապարհի վրա, երբ հասկացել է ժամանակիս պահանջը, որին իբրև կենդանի ապացոյց կարող են ծառայել այն մօտ 30 պարբերական հրատարակութիւնները, որոնք այսօր հրատարակվում են զանազան քաղաքներում թուրքերէն լեզուով, ահա ասում եմ, այդպիսի օրերում մի շարք կենսական հարցեր ստիպում են նրանց ևս պաշտօնապէս խմբվելու և լուծելու այդ հարցերը։

Եւ ահա օգոստոսի 16-ին Ն.-Նովգօրօդի հասարակաց կլուբի դահլիճում օրվայ 12 ժամին բացվեց մուսուլմանների առաջին պաշտօնական համագումարը, որին մասնակցող անդամների թիւը հասնում է 1000 ի։ Բազմազան ձևի գլխարկները, կարմիր ֆէսերը և չալմաները ցոյց են տալիս, որ հաւաքված ներկայացուցիչները Ռուսաստանի զանազան կողմերիցն են։ Այստեղ կը գտնէք զուգ բազմաթիւ բարձր կրթութիւն ստացած թուրքեր—բժիշկներ, իրաւաբաններ, ուսուցիչներ, մօլլաներ, թուրք և ռուս մամուլի ներկայացուցիչներ, բայց ամենից շատ են վաճառականները. դրանց նայելով մարդու աչքին է ընկնում խիստ մի բան, որ համարեա բոլորովին չեն նկատվում մարդիկ աղքատ—բանուոր դասակարգից։ Թուրք մամուլի ներկայացուցիչներ կան—Պետերբուրգից, Բախչիսարայից, Աստրախանից, Բագուից և այլն։ Բացի տեղական ռուս լրագիրների թղթակիցներից կան և մի քանի հոգի մայրաքաղաքի թերթերի կողմից։

Համագումարը բացվեց աղօթքով, որից յետոյ մի երկար ճառ խօսեց Պետերբուրգի «Ուլֆէտ» թերթի խմբագիր՝ Պ. Իբրահիմօվ, որը խօսելով Իսլամի մասին, վերջը հրաւիրում էր բոլոր մուսուլմաններին միանալու և միացած ոյժերով գործելու, իսկ մինչև այժմ եղած միութիւնը նա համարում է աւելի ձևական, այլ ոչ եղբայրական, մարդկային։ Այդ ճառից յետոյ համագումարը անցաւ ընտրութիւնների, որը խլեց անհագին ժամանակ։

Ընտրեցին ժամանակաւոր վարչութիւն, բաղկացած նախագահից և վարչ. 10 անդամներից, որոնցից 4-ը ընտրվեցին իբրև քարտուղար անդամներ։ Նախագահ ընտրվեց նախկին Պետական Դումայի անդամ՝ Թօփչիբաշեվ. բոլոր ընտրութիւնները ընդունվում էին ծափահարութիւններով։ Ընտրութիւններից յետոյ բաւական կարճ, բայց շատ ազդու խօսք ասաց նօրընտիր վարչութեան անդամներից մէկը, ի միջի այլոց նա ասաց.—«Կրօնը մուսուլմանների համար կարևոր է, բայց որպէս զի մեր կախը աւելի գիտակցաբար և խելացի կերպով տանենք, պէտք է անշուշտ ամենից առաջ կռուենք ժողովրդի տնտեսական, սօցիալական և քաղաքական իրաւունքները բարելաւելու համար»։ Այս խօսքերը երիտասարդ պատգամաւորների կողմից ընդունվեցին բուռն ծափահարութիւններով։ Առհասարակ համագումարում նկատվում է երկու ուղղութիւն. 1) պանիսլամական, որի գլուխ են անցած գլխաւորապէս վաճառականները և պապերը և 2) ազատամիտ, որը պաշտպանում են երիտասարդ թուրքերը։ Այդ երկու ուղղութեան ներկայացուցիչները շարունակ ընդհարվում են միմեանց հետ։ Յետագայ ճառախօսները խօսեցին դրված հարցերի, Պետական Դումայի մասին և այլն, որից յետոյ ընտրեցին երկու գլխաւոր մասնաժողովներ. 1) կրօնական հարցերը մշակելու համար և 2) մանկավարժական-դպրոցական հարցերի համար։ Ժողովը փակվեց գիշերվայ ժամ. 10-ին։ Բոլոր խօսակցութիւնները լինում են թուրքերէն. կողմնակի մարդիկ չեն թողնվում։ Ինչպէս լսվում է, համաժողովը շարունակվելու է երեք օր։

Սարգիս քահ. Ասլանեանց

ՍԱԼՄԱՍՏԻ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԻ ԱՌԻԹՈՎ

Սալմաստի ուսուցիչներից պ. Տ. Օտեան «Մշակի» № 160-ում զետեղված իր կոչով հրաւէր է կարդում իր պաշտօնակից ընկերներին, որ միանան՝ իրանց նիւթական դրութիւնը բարելաւելու, իրանց շահերը պաշտպանելու, իրանց խախտ դիրքը ամրացնելու նպատակով. իբրև պաշտօնակիցներից մէկը, պարտք եմ համարում ինձ՝ մի քանի տող գրել։

Անկասկած, Սալմաստի ուսուցիչների միութիւնն ամեն տեսակէտով էլ օգտակար կը լինէր, բայց այդ անելու հնարաւորութիւնը չէ թէ ռուսական ներկայ քաղաքական փոփոխութեան շնորհիւն է, որ կունենանք, այլ ուսուցչական միութիւն կազմելու համար մեզ չէր պակասում հնարաւորութիւն Ռուսաստանի այժմեան կերպարանափոխված դրութիւնից առաջ էլ. և արդէն 3-4 տարի առաջ փորձեր եղել են այդ նպատակով, ժողովներ անգամ ունեցել, ծրագիրներ պատրաստվել, սակայն, շնորհիւ այն հանգամանքի, որ Սալմաստում առհասարակ ուսուցիչ, արմատ չի բռնում, որ գրեթէ իւրաքանչիւր տարի նորանոր ուսուցիչներ գալիս-գնում են, շնորհիւ այն հանգամանքի, որ շատ վաղուց է Սալմաստի կրթական գործը «ի վերուստ» անտէրութեան է արված,—զուրկ է միացեալ թեմական տեսչից (որի խնդրի կարիքի վրա չեմ շեշտում, աւելորդ եմ համարում), և ակնհայտն մօտիկ անցեալում եղած այդ ձեռնարկները, 2-3 անգամ սկսվելով, ընդհատվելով՝ յարատևութիւն և մի արդիւնք չեն ունեցել, պարզապէս, մարդկանց ուժերի, առաւելապէս ղեկավարող ուժի պակասութեան պատճառով։

Մեր կողմից էլ ցանկանում ենք Սալմաստի ուսուցչական միութիւն, առաջնորդվող առանձին լուրջ ծրագրով, ոչ այնքան մեր նիւթական «անյուսալի» դրութիւնը բարելաւելու ակնկալութեամբ, որքան, կրթական գործն ընդհանրապէս բարեյաջող վիճակի մէջ դնելու նպատակով, բայց, Սալմաստի վերաբերմամբ՝ [խօսքս ներկայի մասին լինելով, նախ հարկաւոր է եղածներից աւելի (վիրաւորելու մտօք չունենալով, այս նկատողութիւնս իմ կարգին բաժանում եմ իմ պաշտօնակիցների հետ) թարմ և աւելի պատրաստութիւն ունեցող ուսուցիչներ. այս մէկ. երկրորդ՝ կարող մի կրթական տեսուչ, որից յետոյ, ուսուցչական միութիւնը հնարաւոր, տևական և արդիւնաւոր կը դառնայ։

Եւ մի նկատողութիւն. պ. Օտեան ասում է, որ Ատրպատականի ուսուցիչներս ստրուկներ ենք, հոգաբարձուից սկսած մինչև յետին պաշտօնեայի—գզիրի ձեռքում. այս յայտնութիւնը միանգամայն սխալ եմ համարում իմ կողմից, որ Սալմաստի գիւղերում մի քանի տարով ուսուցիչ եմ եղել, ընդհակառակը, հոգաբարձական ժողովներում առաջին տեղը գիւղական ուսուցչին է յատկացրված. գիւղական հասարակական գործերում գերակշռող ձայնը դարձեալ գիւղական ուսուցչին է վերապահված. յարգելի ուսուցչին միշտ յարգել է և յարգում է ժողովուրդը, ի հարկէ, իր ձեռով, իր հայեցակէտով և, ես զարմանում եմ թէ իմ պաշտօնակիցը մեր ինչ տեսակ ստրկութեան վրա մատնանիշ է լինում։ Այս կէտում, կարծում եմ, իմ պաշտօնակիցներից շատերը համաձայն պիտի լինեն ինձ հետ։

Աւելին.—փաստ է, որ Սալմաստում ուսուցիչը լոկ պաշտօնական (ուսումնարանի) անձ չէ միմիայն. Սալմաստի ուսուցիչներին ընդհանրապէս աւելի հասարակական գործիչ անունը կարելի է տալ (միջավայրն այդպէս լինել հարկադրում է) քան թէ ուսուցիչ և, այս պարագան էլ չէ հաստատում, որ յայտնված ճշմարտութիւնը գիտելիք է, թէ՝ չէ կարելի երբէք ուսուցիչը Սալմաստում ստրկացած համարել. ուրիշ խնդիր է, ի հարկէ, որ Սալմաստի գրեթէ բոլոր գիւղերի ուսուցիչներն անկանոն կերպով ռոճիկ են ստանում հոգաբարձութիւնից, նաև երբեմն անախորժութիւններ ծագում երկուստեք։

Կարճ կերպով կրկնենք մեր խօսքը. ուսուցչական միութիւնը՝ մասնաւորապէս խօսքս ժամուլի մասին լինելով՝ ցանկալի է, 'բայց' ըստ իս՝ այստեղին նախ և առաջ ցանկալի է նոր, շատ չը մաշված, շատ չը թօշնող—փախչող ուժեր և որոնց ղեկավարող ձեռնհաս, կրթական տեսուչ. նրանցից յետոյ, ինքնըստինքեան դժուար չի լինի ուսուցչական միութիւն կազմել և լաւ հետևանքների սպասել։

Ստեփան Յովհաննիսեան

Սալմաստ-Հաֆթվան, օգոստոսի 10-ին։

Յ. Գ.—Ի դէպ. անցեալ տարի, Ռօստովում բնակող սալմաստեցի մի կարգ ուսեալ հայեր՝ թող ներվի մեզ նկատել «խմբուկով» (տըպագրված կանոնադրութիւն ունեցան, թերթերում յայտարարեցին առանձին յօդուածներով, Սալմաստում պատգամաւորական ժողով գումարել տուին, գործադիր մարմին ընտրվեց) մի ընկերութիւն կազմեցին—«Կրթասիրաց» անունով, որ նպատակ էր դրել Սալմաստի կրթականին՝ գլխաւորապէս նիւթական միջոցներ մատակարարելով՝ զարկ տալ։ «Կրթասիրացն» մինչև հիմա մի բան չը շինեց, այդ մասին էլ ձայն ծպտուն չի լսվում, այն ինչ խոստացել էր ներկայ տարեշրջանից և եթ սկսել իր գործունէութիւնը։ Հետաքրքիր է իմանալ, սալմաստեցին այդ շնորհին, որին այնքան պէտք ունի՝ յուսայ թէ չը յուսայ։

Ս. Յ.

ՄՈՌԱՑՎԱԾ ԱՆԿԻՒՆՆԵՐ

VIII

Մեր նախորդ յօդուածում տեսանք, որ Դարաչիչակի շրջանում գոյութիւն ունի համայնական հողատիրութեան սիստեմը. մի և նոյն ժամանակ մենք տեսանք, թէ ինչպէս գործնական կեանքի մէջ նա շատ աւելի հեռու է իր բուն նպատակից։ Այդ նոյն երևոյթը նկատելի է նաև հարկատուութեան գործի մէջ։ Այժմեան հարկահանութեան սիստեմը, համեմատած նախկին գլխահարկի սիստեմի հետ, կարելի է եկամտային (ПОДОХОДНЫЙ) համարել, այն ինչ գործնական կեանքի մէջ այդ չենք տեսնում։

Այսպէս գիւղերում բոլոր տեսակի հարկերը, գիւղական և համայնական ծախքերը և դաշտերի, խոտահարքերի ու արօտատեղիների պաշտպանութեան ծախքերը հաւասար չափով բաժանվում են բոլոր նաֆարների վրա, անխըտիր սեռի և հասակի՝ և պահանջվում են ամենայն խստութեամբ, լինի հարուստ թէ աղքատ։ Հարկահանութեան այդ կարգը մտցված է, ի նկատի ունենալով համայնական հողատիրութիւնը կամ այն, որ իւրաքանչիւր նաֆար ստանում է հաւասարաչափ հողաբաժին. սակայն տեսնենք նա արդեօք նմանում է հարկատուութեան այն արդարացի սիստեմին, որին անուանում են եկամտային։

Նախ՝ հարկից ազատ են այն եկամուտները, որոնք ստացվում են դրամական շրջանառութիւններից, այն է առևտուրից, դրամների շահեցողութիւնից։ Ազատ են նաև այն եկամուտները, որոնք ստացվում են անասնապահութիւնից, թռչնապահութիւնից, մեղուաբուծութիւնից և նման մի շարք պարապմունքներից։ Այս կէտի վրա մենք երկար կանգ չենք առնի, որովհետև նա այն կարդինալ կէտերից մէկն է հարկատուութեան խնդրում, որը զբաղեցնում է ամբողջ Ռուսաստանը և որը կազմում է նոյն իսկ եկամտային հարկի հիմնաքարը։ Այս կէտը առաջնակարգ խնդիրներից մէկն է նոյն իսկ Ռուսաստանի յեղափոխական ամբողջ շարժման մէջ։ Երկրորդ՝ չը նայած այն հանգամանքին, որ վարելահողերը բաժանվում են հաւասարաչափ, բայց ի նկատի ունենալով այն երևոյթը, որ հաւասարաչափ հողաբաժինները չեն ներկայացնում հաւասարաչափ արդիւնաւէտ, որովհետև հողաբաժանումը չէ կատարվում վիճակով, այլ մէկի ձեռքում եղած հողաբաժինը շարունակ մնում է նրա ձեռքին և աւելի քանակը նա կարում է տալիս չունեցողին ցանկացածի պէս, հետևապէս վատ տեղերից, ինչպէս որ տեսանք մեր նախորդ յօդուածում, որով և ստեղծվել են թէև հաւասարաչափ բաժիններ, բայց միանգամայն տարբեր եկամուտներով, ուստի միանգամայն անարդարացի է հարկատուութեան այն սիստեմը, որը ընդունված է այս շրջանի գիւղերում, համահաւասար հարկատու դարձնելով բոլոր գիւղացիներին անխըտիր սեռի և հասակի։ Եւ իսկապէս ինչպէս կարելի է հաշտվել հարկատուութեան այն սիստեմի հետ, երբ թէև հաւասարաչափ հողաբաժին ունեցող, բայց երկու և յաճախ աւելի անգամ շատ բերք վերցնող գիւղացին այնքան հարկ է վճարում, որքան և մէկ ուրիշը, որը ամենանչին բերք է ստանում իր ունեցած վատ հողաբաժինների պատճառով։

Չէ՞ որ միևնոյն գիւղի սահմաններում հողերը իրանց տեսակներով և պայմաններով տարբերվում են միմեանցից շատ և շատ չափով։ Չէ՞ որ շնորհիւ գիւղերում տիրող տարիների, տասնեակ տարիների ընթացքում հիմք բռնած մի որոշ դասակարգ, աջողեցնելով ձեռք ձգել անհամեմատ շատ հողաբաժիններ և համայնական հողատիրութեան ժամանակ վայր դնելով ամենավատ մասերը այդ նոյն արտօնեալ դասակարգի ձեռքում, մնացել է հողաբաժինների ամենալաւ տեսակը—այն ինչ հարկը հաւասարաչափ ծանրանում է լաւ և վատ հողաբաժիններով օգտվող գիւղացիների վրա։ Բացի այս գոյութիւն ունի մի երրորդ հանգամանք ևս, սակայն որը որքան էլ ակնյայտնի հակասական է թէ հողատիրութեան համայնական սկզբունքին և թէ նրան հետևող եկամտային հարկատուութեան սիստեմին, այնուամենայնիւ այս շրջանում նա մնացել է շօշափվող խնդիրների շարքից դուրս, հետևապէս անքննելի և անլուծելի։ Այդ արօտատեղիներից և խոտահարքերից օգտվելու խնդիրն է, որով կարծում ենք շահագրգռված կը լինեն շատ և շատ տեղեր։

Ինչպէս նախորդ յօդուածից տեսանք, հողաբաժանութիւնը տեղի է ունենում միմիայն վարելահողերի և խոտահարքերի վերաբերմամբ. միմիայն արտերն ու խոտահարքերն են, որոնք մանրամասն, եթէ կարելի է այսպէս ասել, կտոր-կտոր չափվում և բաժանվում են նաֆարների վրա, իսկ արօտատեղիներն ու հայլաղատեղիները չեն չափվում, չեն բաժանվում, այլ մնում են ընդհանուրի տրամադրութեան տակ, ուր արածում են համայնքի նախիրներն ու հօտերը։ Բայց մենք գիտենք, որ մեզանում համայնքը չէ ներկայացնում տնտեսապէս համանման ծուխերից բաղկացած մի ամբողջութիւն։ Մենք գիտենք, որ մեզանում գիւղացիութիւնը ներկայացնում է մի անվերջ աստիճանական բուրգ իր կայքային տնտեսական վիճակով. մենք գիտենք, որ մեր գիւղացիութեան մէջ արդէն որոշ կերպով առաջ են եկել ունևորների և չունևորների դասակարգեր. մենք գիտենք, որ մեր գիւղերում մի քանի հարիւր գլուխ ոչխար և 20—25 գլուխ տաւար ունեցող գիւղացու կողքին պատկից ապրում է մի այլ գիւղացի միանգամայն զուրկ տաւարից և ոչխարից. և այս այժմ սովորական երևոյթների շարքն է անցել։ Այսպէս 300 ծուխ ունեցող Ներքին-Ախտա գիւղում տաւար և ոչխար չունեցող ծխերի թիւը հասնում է 40-ի. 135 ծուխ ունեցող Մաքրավանք գիւղում 30-ի, այն է առաջին դէպքում 13%, իսկ երկրորդ դէպքում 22%. Եթէ առաջնորդվելու չը լինենք նոյն իսկ եզակի երևոյթներով, այլ վերցնենք մի շարք գիւղեր, պատկերը համարեա նոյնն է։ Մեր որոշած ութն գիւղերում՝ Ախտա-Վերին, Ախտա-Ներքին, Քաղսի, Այափարս, Մաքրավանք, Քարվանսարա, Ունդամալ և Եսիլջէ, որոնց ծխերի ընդհանուր թիւը հաւասար 1676-ի, կենդանիներ չունեցող ծխերի թիւը հասնում է 330-ի կամ 20%-ի. Եթէ համեմատութիւն կատարենք մնացած 80% կենդանիներ ունեցող գիւղացիութեան վերաբերեալ, կը տեսնենք, որ նրանցից շատերը թէև ունեն կենդանիներ, բայց ընդամենը մէկ կամ մի քանի հատ, այն ինչ մեծ նախիրները և հօտերը կազմվում են առանձնապէս մի փոքր թիւ կազմող հարուստների ունեցած տաւարներից և ոչխարներից։ Եւ ահա արօտատեղիների և հայլաղների այն տարածութիւնները, որոնք պատկանում են համայնքին, այն համայնքին որի նաֆարները կրում են համահաւասար չափով հարկերի ծանրութիւնը, այդ տարածութիւնների վրա արածում են այն նախիրներն ու հօտերը, որոնք պատկանում են գլխաւորապէս ունևոր դասակարգին, Ինքնըստինքեան հարց է ծագում՝ ինչու արօտատեղիներից պիտի օգտվի կենդանիներ ունեցողը, մանաւանդ շատ ունեցողը, հարուստը, իսկ հարկը հաւասարապէս ծանրանայ և՛ շատ, և՛ քիչ կենդանիներ ունեցողի և նոյն իսկ միանգամայն կենդանիներ չունեցող գիւղացու վրա։ Չէ՞ որ կենդանիները նոյնպէս եկամուտ են տալիս գիւղացուն, ինչպէս և վարելահողերը. չէ՞ որ համայնքի արօտատեղիները և հայլաղները եթէ տային չօղարներին վարձով, նրա վարձագինը կըպատկանէր բոլորին կամ կարելի կը լինէր նրանով հարկերը վճարել։ Չէ՞ որ ամենայն իրաւամբ կենդանիներ չունեցողները կարող են պահանջել, որ արօտատեղիները նոյնպէս բաժանվեն նաֆարների վրա և կամ կենդանիներ ունեցողներից պահանջվի որոշ տուրք հարկերի հաւուցման հաշուին։

Այս դեռ բոլորը չէ։ Կան նաև մի շարք ծախքեր և աշխատանքներ, որոնք հասարակական բնաւորութիւն են կրում. դրանք էլ ծանրանում են բոլորի վրա համահաւասար կերպով և յաճախ ծանրանում են աւելի չքաւոր, խեղճ ժողովրդի վրա քան հարուստ, ունևորի։

Վերին-Ախտա գիւղը եկեղեցի է շինում. այս տարի եկեղեցու հոգաբարձութիւնը և եկեղեցին աւարտելու նպատակով պարտք է վերցրել 600 րուբլի. ահա այդ պարտքն էլ աշխատում են նաֆարաբաժին անել և հաւաքել ինչպէս հարկն է. ի հարկէ, այդ առաջարկին եղան դիմադրողներ և հաւանօրէն աջողվի հաւաքել ըստ կարողութեան փոխելով այդ առաջարկը, սակայն քանի այդպիսի դէպքեր կարելի է եղել դարձնել. աւելի որոշ էր մի դէպք Ներքին-Ախտայում, հայ-թուրքական ընդհարումների պատճառով այժմ շատ գիւղերում կարիք է զգացվում առանձին պահապաններ վարձել նաև սար բարձրացողների համար։ Սար բարձրանում են հարուստները-մալատէրերը. բայց եկէք և տեսէք, որ Ներքին-Ախտայի սար բարձրացողները ուզում էին պահապանների վարձը ձգել համայնական ծախքերի մէջ։ Շատ ուշագրաւ է այս տարօրինակ երևոյթը։ Բաւական չէ, որ հօտատէր-մալատէրը ուտեցնում է հասարակական պատկանող արօտատեղին, բաւական չէ, որ նա առանց վարձագնի իր կենդանիների համար օգտվում է համայնքի տեղերով, դեռ նա համարձակութիւն ունի համայնքին ասելու՝ արի պահպանիր իմ կենդանիները աւազակներից. և այսպիսի մի առաջարկութիւն մերժելու համար չքաւոր դասը դժուարութիւնների է հանդիպում։

Մենք հարկահանութեան և կոռ ու բիգարի մանրամասնութիւնների մէջ շատ չենք մտնում. այնտեղ կայ շահագործման խնդիր, աւելորդ ծախքերի խնդիր, և չքաւոր դասի վրա ծանրացող խնդիր. սակայն հարցի այս մի երկու թեթևակի լուսաբանութիւններից կարելի է լինում համոզմունք կազմել, թէ որքան հարկատուութեան խնդիրը մեզանում [illegible] խնդիր է, որքան նա անարդարութիւնների դուռն է բացել, որքան նա պահանջում շուտափոյթ լուծումն։

Օնի

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

Օգոստոսի 31-ին

Չորս օր է, որ ամբողջ քաղաքը մտքի ալեկոծութեան մէջ տարուբերվում էր մի վերին աստիճանի բացառիկ, միևնոյն ժամանակ խիստ ցաւալի դէպքի պատճառով, որը մինչև ներկայ րօպէն դեռ չէ լուսաբանված։ Ընդհանուրի մտատանջութեան առարկան հետևեալ դէպքն է. ամսիս 26-ին, ուրբաթ երեկոյեան, քաղաքումս 8 հայ երիտասարդներ ([illegible] ուսանողներ) վարձում են երկու ֆայտոն Բէշ-Թիլիսա գնալու, շաբաթ օրվայ համար, որ երեկոյեան վերադառնան, վճարելով իւրաքանչիւր կառքին 12 ր.։ Այդ օրը չեն վերադառնում. կառապանների տնեցիք մտատանջութեան մէջ են ընկնում, բայց նրանց գրացիներն համոզում են, որ գուցէ Բէշ-Թիլիսայից կամ Անի և կամ մերձակայ հնութիւններն են գնացել։ Սպասում են մինչև երկուշաբթի ժամը 12-ը, բայց ի զուր, ոչ ոք չէ գալիս. կառապանների ուստաբաշին այդ օրը յայտնում է ոստիկանութեանը, որ, շաբաթ օրից չեն վերադարձել երկու կառքեր №. № 6—47 մօլօկան կառապաններով և 8 երիտասարդներով։ Մի քանի րօպէ յետոյ ոստիկանութիւնը ստանում է մի հեռագիր Արգինայի գաւառապետից հետևեալ բովանդակութեամբ.

«Յայտնված են երկու կառքեր № № 6—47 ձիերը վիրաւորված, առանց կառապանի և առանց ճանապարհորդի»։ Ուրեմն մի ինչ որ փորձանքի են հանդիպել թշուառները։ Իսկոյն ամբողջ քաղաքը ալեկոծվեց, կայծակի արագութեամբ գործադուլ արին բոլոր կառապանները, նստեցին ձիերը, վերցնելով զէնքեր շտապեցին զանազան կողմեր՝ որոնելու իրանց թշուառ արհեստակիցներին։ Այսօր 4-րդ օրն է, ժամը 3-ը, դեռ ոչ մի հաստատուն լուր, տեղեկութիւն չը կայ։ Ժողովրդի մէջ բազմատեսակ առասպելական լուրեր, ճիշտն ասած, սոսկալի ստեր են պտտում գալիս։ Շուտով կը պարզվի ոստիկանական եզրակացութիւնը և այն ժամանակ կը [illegible] մեղաւորին. ընդհանուր տրամադրութիւնը խիստ լարված է, մանաւանդ մօլօկան համայնքինը։

Հացթուխների գործադուլը շարունակվում է հիմա աւելի խիստ կերպով. նոյն իսկ տէրերին էլ չեն թողնում աշխատելու. շատերը փակել են։

Բոկ

ՆԱՄԱԿ ՆՈՐ ԲԱՅԱԶԷՏԻՑ

Օգոստոսի 12-ին

Օգոստոսի 10-ին, տեղիս հաշտարար դատարանի դահլիճում, հնագէտ պ. Երուանդ Լալայեանց, որ այս երկու տարի է ինչ պեղումներ է կատարում մեր կողմերում, կարդաց մի դասախօսութիւն, թռուցիկ ակնարկ ձգելով հին-հայկական և խալդէական պատմական կեանքի վրա։ Պ. դասախօսը ամեն մի հնագարեան-պատմական երևոյթ բացատրեու կենդանի փաստերով ցույց էր տալիս զանազան տեսակի իրեր, որոնց ձեռք էր բերել նա պեղումներ անելիս մեր գաւառում և այլ շրջաններում, այն է մարդու գանգեր, ձիու կմախքի մասեր, ականջի օղեր, ապարանջաններ, ձիու սանձ, նիզակ, թուր, գուրզ, դաշոյն և այլն, որոնք բոլորը, դասախօսի ասելով, պատկանում են «բրօնզիա դարին», իբրև հազուագիւտ իրեր, իբր ոսկու գին արժեցող զարդեր այն ժամանակվայ մարդկութեան (մօտ 3,000 տարի)։ Ահագին մեծութեան դահլիճը ծայրէ ծայր լիքն էր երկու սեռի ընտիր հասարակութեամբ, ինտելիգենտ և զանազան դասակարգերից, որը լուրջ հետաքրքրութեամբ լսում էր պ. դասախօսին։

Վերջում պ. դասախօսը յայտնեց, որ երբ ինքը պեղումներ է կատարում զանազան տեղերում, տեղական ազգաբնակութեան գիւղական ռամիկ ժողովուրդը կարծում է, որ նա ոսկի է որոնում կամ հարստութիւն գտնում, ուստի շատ տեղերի գիւղացիները, մի բան գտնելու և հարստանալու մտքով, իրանք պեղումներ են կատարում հին, աննման գերեզմաններում, և երբ ոչինչ չեն գտնում, զայրանում են, իսկ գտած հնութիւններն էլ փչացվում են։ Այդպիսով ահա յաճախ չահագործվում են մեր թանկագին հնութիւնները և փչանում։ Ուստի, որպէս զի կորստից ազատվեն մեր հազուագիւտ հնութիւնները և մեր ազգային հնագիտական թանգարանի զարդը լինեն՝ մեծ լոյս սփռելով նաև հին-հայկական և անցեալ պատմական կեանքի վրա, ցանկալի է և նոյն իսկ անհրաժեշտ, որ գաւառներում լինէին հսկող և հովանաւորող մարմիններ, որոնք համարվելով հնագիտական ընկերութեան ճիւղեր՝ իրանց վրա վերցնէին կորստից ազատելու հնագիտական առարկաները և ուսումնասիրութեան պարտականութիւնը։ Այդ աւելի անհրաժեշտ է այն նկատմամբ, որ մեր նորահաստատ հնագիտական ընկերութիւնը այսուհետև ամեն ջանք է գործ դնելու հայկական-պատմական կեանքի ուսումնասիրութեամբ զբաղվելու, շօշափելի փաստերով և կենդանի ապացոյցներով ներկայացնելու եւրոպական ազգերին հայկական պատմական կեանքը՝ գիտական տեսակէտից, քանի որ առանց այդ փաստերի, ինչպէս յայտնեց պ. Լալայեանց, եւրոպական գիտնականները միջոց չեն գտնում ըստ արժանւոյն ուսումնասիրելու մեր պատմական կեանքը, և իրանց պարտաւոր չեն համարում մտնել մեր գաւառները և ուսումնասիրութիւններ և պեղումներ կատարել, առանց որոնց մեր նախնական կեանքի պատմութիւնը իր արժանի տեղը չունի ազգերի թւում՝ գիտական ուսումնասիրութեան տեսակէտից։ Ուստի անհրաժեշտ է, որ մենք ինքներս աշխատենք այդ ուսումնասիրութիւնը դնել եւրոպական գիտնականների առաջ հաստատ, կենդանի և շօշափելի փաստերով ու ապացոյցներով։

Եւ ահա այդ տեսակէտից՝ կազմած ունենալով մի խնդրագիր մեր քաղաքացիների կողմից ուղղված Թիֆլիսի հնագիտական ընկերութեան, պ. Ե. Լալայեանը հրաւիրեց հանդիսականներին, եթէ ցանկութիւն ունեն մեր քաղաքում ունենալ ընկ. ճիւղ, թող ստորագրվեն իբրև անդամ-բաժանորդ։ Հանդիսականներից շատերը մեծ ուրախութեամբ ստորագրեցին, գոհ մնալով նաև դասախօսութիւնից բոլոր ժողովականները։

Մոռացայ իր տեղում ասել. ճիւղեր ունենալու համար գաւառներում կառավարութիւնից թոյլտուութիւն ստանալու կարիք չը կայ, քանի որ Փոխարքան հաստատելով հնագիտական ընկերութիւնը, միանգամայն իրաւունք է տուել նրան ճիւղեր ունենալ գաւառներում, որոնք բացվելիս միայն պէտք է յայտնել կառավարութեան։

Վաղը, կիրակի, ամսիս 13-ին, տեղիս օրիորդաց ուսումնարանի թատրոնական դահլիճում, սիրողների բարեհաճ մասնակցութեամբ, Թիֆլիսի դրամատիկական խմբի դերասան պ. Ա. Ազեան տալու է մի ներկայացում։ Խաղալու են «Կրեչինսկու հարսանիքը», թարգմանութիւն Արաքսիանի և «Էս էլ քեզ մօդկլութիւն», հեղինակութիւն Տէր-Գրիգորեանի։ Պէտք է յիշել, որ այս ամառ մեզանում մի փոքր կենդանութիւն է տիրում. ամեն շաբաթ երեկոյթ, ցերեկոյթ, դասախօսութիւն և այլ բաներ են տեղի ունենում։ Դա նրանից է, որ բոլոր ուսանողները և այլ ինտելիգենտ անձինք հաւաքվել են այստեղ ամառը անցկացնելու և կրկին իրանց պարապմունքին վերադառնալու համար։

Գ. Սինանեանց

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ալէքսանդրօպօլ, օգոստոսի 24-ին

«Մշակի» № 176-ում տպված հոգաբարձութեանս գրութեան մէջ պ. Յ. Կոստանեանցի վերաբերեալ մի փոքր սխալ կայ, այն է՝ պ. Յ. Կոստանեանի ուսուցչութեան պաշտօնի համար անյարմար լինելու մասին խօսվել է ոչ թէ պաշտօնական մանկավարժական ժողովներում, այլ տեղիս ուսուցիչների շրջաններում։

Նախագահ ս. Լուսաւորիչ եկեղեցու հոգաբարձութեան՝ Յ. Գասպարեանց

Բաթում, 30 օգոստոսի

Կարդալով «Ջանգ»-ի № 15-ում զետեղված «Դաշնակցական ընկերներին» ուղղված բաց նամակ, այլ ևս չենք կարող լուռ կենալ, որովհետև այդ նամակի ստորագրողները իրաւունք չունէին Միհրանին և իր ընկերներին դաւադիր անուանել հրապարակաւ։ Մենք իրանց թոյլ տուած էինք միայն, մտքերի փոխանակութիւն անէին և ոչ թէ առանց մեր տրամադրութիւն հասկանալու, իբրև մեր ներկայացուցիչներ, ներկլէին թերթի էջեր։

Այդ պարոնները կոչ են անում, որ Միհրանի նմանները հեռու մնան իրենց շրջանից։ Այո, մենք բոլորս պիտի հեռանանք ձեզ նման երկմիտներից, որ կը նմանիք ալեկոծված ծովու ալիքներին, կը հեռանանք ձեզմէ և մինչև վերջին շունչ կաշխատենք վեհ պահել Դաշնակցութեան նպատակ, որ սրբագործված է 300 հազար թշուառների անմեղ արիւնով։ Իսկ դուք կրցածնուդ չափ շահագործէք զայն, կեղծաւորելով այլասերուելով և երևակայական գաղափարներով։ Մենք տակաւին ժամանակ չունինք սնուելու այդ սին ու փուճ ցնորքներով ներկայ պայմաններու ստիպմամբ»։

Դուք, ով թշուառականներ, դուք, որ Դաշնակցութեան մակաբոյծն էք, լռէք գոնէ առայժմ, եթէ ոչ մենք պիտի քարկոծենք ձեզ։ Կասենք ձեզ, ո՜վ ողորմելիներ, չէ՞ որ դուք ալ գիտէք Դաշնակցութիւն ուրիշ ոչինչ է, եթէ ոչ տաճկա-հայկական դատ։ Ձեզ ո՞վ իրաւունք տուած էր բաց թողնել կովկասեան նախագիծ և ընդունել հասարակապետութիւնը։ Ձեզ ո՞վ իրաւունք տուաւ հաստատել նոր կարգեր և ձուլուել սօցիալ-յեղափոխականների հետ։ Այդ բոլոր արիք աջակցութեամբ ձեր արբանեակների։ Միթէ ամբողջ թրքահայ դատի պատասխանատուն Սեպուհն և իր նմանները են։

Հարցուցէք մեզմէ, պարոններ, և մենք ձեզ պիտի ըսենք, թէ ձեր բռած ծրագրային և գործունէութեան փոփոխութիւն կախված էր ընդհանուր ժողովի որոշումէն, և ձեր բռած քայլ Դաշնակցութեան խակական նպատակի խոչընդոտ է։ Դուք, անմիտ պարոններ, կամաչէք ուրիշների բամբասանքներից և կը թաղէք ճշմարտութիւն, բացականչելով թէ մենք ազգային կուսակցութիւն չենք իբրև դաշնակցական։ Բայց մենք բարձրաձայն պիտի կոչենք ձեզ թէ մենք թէունդ ազգային կուսակցութիւն ենք, որովհետև գաւառում երկրում մեզ շրջապատող տարրեր մինչև հիմա գիտակցութեան չեն եկած և տակաւին ուշ է նրանց։

Իսկ դուք, պարոններ, որ աչք էք տալիս ս.-յեղափոխականներին և ս.-դեմոկրատներին, առանց քննելու նրանց ներքին ձգտումներ, անոնք այն, որ իրենցն է, իրենց վերապահում են։ Բայց ներկայ անունների տակ գործել՝ ուրիշի շամնի մէջ ալ մաս ունենալու փափագն է։ Քննեցէք վրայ ս.-դեմոկրատներին, պիտի գտնէք, որ նրանք թէունդ ազգային կուսակցութիւն են։

Երբ յիշում ենք մեր յետև մնացած թշուառ, կողոպտված, արիւնաներկ հայրենիք, և նկատի ենք առնում տեղիս հայ կուսակցականների գործունէութիւն, լաց ենք լինում և չենք կրնար դիմանալ։ Մեր ողբ գոնէ թող գնայ իմացնելու մեր թշուառ ժողովրդին բոլոր յուսախաբութիւններ։

Ո՜վ թշուառ ժողովուրդ, սպասիր, սիրտդ քարացուր, արցունքներդ թող չորանան և համբերութիւնդ կրցածիդ չափ շատցուր և երկար սպասէ, մինչև որ Կովկաս ստանայ ազատութիւն, աւտօնօմիայի օրէնքներ գործադրուին նահանգներում, այն ատեն մեր քաղցր չէֆեր պիտ գան և ձեր կրօնամոլ քիւրդի, և թթւած ասորիի, և նախապաշարված եզիդիի մէջ պրոպագանդա մղելու։

Քնացի՛ր, քնացի՛ր, ով բազմատանջ տաճկահայ ժողովուրդ. բայց գոնէ մի անգամ ալ յառէիր աչքերդ քու դաւաճաններիդ վրա, զարկ տայիր նրանց անտարբերութեան, արթնացնէիր նրանց մեռած ու շահամոլ զգացմունքներ։

Ազնիւ ընկերներ, սիրելի հայրենակիցներ, ձայն բարձրացուցէք, մի ամչնաք. եթէ չունենք ուժ, գոնէ ունենք ճշմարիտ իրաւունք մը և արդար կոչում մը։

Վերջացնելով մեր խօսքը, ըսում ենք. լռէք և հեռացէք ասպարէզից, ձեր այդ աններելի համարձակութիւն գոնէ ծածկեցէք քօղով. մի գրգռէք մեր արդար զայրոյթ ձեր հանդէպ, ով Հ. Յ. Դաշնակցութեան սր. դրօշակի անունով խօսող, խաբված պարոններ....

Տաճկահայ խմբի խմբապետներ

Խմբեր.—Ռուբէնեան, Մախին, Բագրատունի, Տապան, Արեան, Քոստաղ, Ճարտար, Սուլխան, Բլէջան, Եփրատ, Սիրան-աղբիւր, Գիւզալ, Կամբրալ, Աղբիւրի որդի Սողոմոն։

Էջմիածին, օգոստ. 28-ին

Խնդրեմ ճշմարտութիւնը վերականգնելու համար մի անկիւն շնորհէք երկտողիս «Մշակ»-ի մօտակայ համարներից մէկում։

Օգոստոսի 22-ին Էջմիածնից «Ջանգ»-ին հաղորդում են. «Վանքական ինտրիգները շարունակվում են։ Փորձեր արվեցին՝ դիւանապետ Տաճատ վարդապետին պաշտօնից զրկելու և տեղը պահպանողականների կողմնակից Յուսիկ վարդապետին նշանակելու. բայց փորձերն առայժմ անյաջող են» (Տես «Ջանգ» № 11)։ Լրատուի հաղորդած այս տեղեկութիւնը միանգամայն ճշմարիտ չէ։ Իրողութիւնը հետևեալն է, որ և ամենայն հարազատութեամբ առաջ եմ բերում ճշմարտութիւնը վերականգնելու համար։

Մայիսի վերջերին ես հրաժարվեցի Դիւանապետի պաշտօնից։ Վեհափառ Հայրապետը չընդունեց իմ հրաժարականը։ Դրա փոխարէն նա ինձ երեք ամսով արձակուրդ տուեց, Դիւանի ժամանակաւոր կառավարութիւնը մինչև իմ վերադարձը Տաճատ վարդապետին յանձնելով։

Արձակուրդից վերադառնալով Էջմիածին, ըստ սովորութեան ներկայացայ Վեհափառ Հայրապետին, որը ի միջի այլ խօսքերի ասաց և հետևեալը. «Աղէկ բրիր, որ վերադարձար. Դիւանի գործեր մնացել են երեսի վրա. այժմ գնա—հանգստացիր. ես քեզ դարձեալ կը կանչեմ»։ Եւ իրօք յաջորդ երկու օրերը (ամսիս 16-ին և 18-ին) Հայրապետը, կանչելով ինձ, պատուիրեց անյապաղ կերպով Դիւանապետի պաշտօնը վերստանձնել։

Խոնարհվելով Հայրապետի հրամանի առաջ, ես ակամայ համաձայնութիւնս տուի և միևնոյն ժամանակ խնդրեցի, որ Տաճատ վարդապետին կանչէ և պատուիրէ նրան Դիւանի ընթացիկ գործերն ինձ յանձնել։ Անմիջապէս Տաճատ վարդապետը ներս կանչվեց Վեհի մօտ և նա՝ հ. Տաճատը դուրս գալով, ասաց ինձ. «Հայր սուրբ, Վեհափառը պատուիրեց ինձ Դիւանի գործերը ձեզ յանձնել, համեցէք Դիւանատուն»։ Դիւանատուն գնալով, ես խնդրեցի Տաճատ վարդապետին թղթերը կարգաւորել և ճաշից յետոյ յանձնողական և ստացողական գործողութիւնը կատարել։ Համաձայնվեց։ Բայց ես Դիւանատան մէջ այնուհետև այլ ևս Տաճատ վարդապետին չը տեսայ, չը նայելով, որ ես նրան թէ անձամբ և թէ ուրիշի միջոցով խնդրեցի գոնէ հինգ րոպէով Դիւանատուն մտնել։ Սակայն նա չեկաւ՝ չափազանց զբաղված լինելու պատճառով։

Կենտրոնական ժողովի անդամներից ոմանք լսելով, որ Տաճատ վ-ն այլևս Դիւանապետ չէ և ընդունելով հանդերձ, որ կատարված իրողութիւնը միանգամայն իրաւացի է և օրինական, բայց և այնպէս իրանց ներկայացուցչի ձեռքով խնդրում են Վեհափառից, որ Տաճատ վ-ը շարունակէ Դիւանապետի պաշտօնը գոնէ մինչև կենտր. ժողովի վերջը, պատճառաբանելով, որ նա ժողովին վերաբերեալ գործերին աւելի լաւ ծանօթ է, որ «հրահանգ-կոնդակը» նրա օրով է գրված և այլն։ Վեհափառը նրանց խնդիրը մերժում է։ Այս իրողութիւնը ինձ հաղորդեց Վեհափառի եղբօրորդին՝ պ. Խորէն Խրիմեանը։

Ես չը կամենալով մի կողմից Տաճատ վ-ի դիւանապետութիւնը ցանկացող պատգամաւորների վրա ոևէ ճնշումն գործ դնել և միւս կողմից էլ անկարող համարելով ինձ ներկայ պայմաններում Դիւանապետի պաշտօնը վարել, ամսիս 21-ին գրաւոր հրաժարական մատուցի Նորին Վեհափառութեան, որ և ընդունեց։

Այս լուսաբանութիւնից յետոյ թող ընթերցողը դատէ թէ ո՞րքան բարեխղճութիւն է «Ջանգ»-ի լրատուի հաղորդածը։

Յուսիկ վարդապետ

Թիֆլիս, օգոստոսի 25-ին

Թոյլ տուէք «Մշակի» միջոցով ի գիտութիւն հրապարակ հանել հետևեալը և խնդրել թէ հասարակութեան և թէ ձեր աջակցութիւնը նրա մէջ շօշափված խնդրի բարեյաջող լուծման համար։ Բանն ահա թէ ինչումն է։

Այս տարի Մարիամեան-Յովհանեան դպրոցում իրանց ուսման ընթացքը աւարտեցին բաւականին թւով աշակերտուհիներ և ստացան պաշտօնական վկայական։ Նրանց ծնողները տեսնելով դպրոցի վարչութեան տուած ծաղկանկար վկայականները, համոզված էին, թէ իրանց զաւակները դպրոցից հետները բերել են գիտութեան մի որոշ պաշար խիստ ուրախացան և ամեն հնար գործ դրին, ամեն նեղութիւն յանձն առան, որ նրանց, դեռ ևս մատաղահաս զաւակները կարողանան իրանց ուսումը շարունակել օրիորդաց գիմնազիաներում։ Բայց ո՞րքան մեծ եղաւ նրանց զարմանքը, երբ աւարտողներից շատերը դիմելով գիմնազիա, անկարող եղան մտնել ոչ միայն երրորդ, այլ և երկրորդ դասատունն անգամ։ Ահա այստեղ ծնողները զգացին, որ իրանց զաւակները ի զուր են անցկացրել իրանց հինգ-վեց երկար ու ձիգ տարիները դժբաղդ Յովհան.-Մարիամ. դպրոցի պատերի մէջ, շնորհիւ նոյն ժամանակի աւագ վարժուհու և ուսուցչական կազմի։ Նրանք նոր իմացան, որ իրանց զաւակները ծաղկանկար վկայականներ ունենալով ձեռքերին, ամօթ է ասել, կարգին չը գիտեն թուաբանութեան չորս գործողութիւնները, չը գիտեն հայերէն կարդալ և գրել և աւելի թոյլ են ռուսերէնի մէջ։

Այժմ թէ ծնողները և թէ նրանց խեղճ զաւակները մնացել են երկու կրակի մէջ և յուսահատված՝ չը գիտեն թէ ինչ անեն, ինչպէս տնօրինեն իրանց դեռ ևս մատաղահաս զաւակների բաղդը։ Նրանք ստիպված միասին գումարվել և խորհրդակցել են այս նրանց համար կենսական հարցի մասին և առ այժմ եկան այն եզրակացութեան, որ խնդիրքով դիմեն Մարիամեան-Յովհանեան դպրոցի տեսուչ պ. Լ. Սարգսեանին, որ շնորհ անի համոզելու դպրոցի նորընտիր հոգաբարձութեանը մի դասարան ևս բանալու, ուր նրանց զաւակները կարողանան շարունակել իրանց ուսումը գոնէ մի տարի ևս իր՝ պ. Լ. Սարգսեանի ղեկավարութեան տակ։ Մենք խորին կերպով համոզված ենք, որ մեր զաւակները պ. Սարգսեանի հմուտ ղեկավարութեան ժամանակ մի տարում աւելի լաւ կը պատրաստվէին, քան բոլոր անցեալ ժամանակ։ Մենք ցաւում ենք, որ բաղդ չենք ունեցել, որ մեր զաւակների կրթութիւնը հէնց սկզբից պ. Սարգսեանի հոգացողութեան չէ յանձնված եղել։

Մենք նոյնպէս լիայոյս ենք, որ նորընտիր հոգաբարձութիւնը ի նկատի կառնի ծնողների անտանելի դրութիւնը, նրանց աղքատութիւնը, նրանց խնդրի արդարացի լինելը, ապա և աշակերտուհիների անելանելի դրութիւնը, իր կողմից հեշտութեամբ կը համաձայնի մի դասարան ևս բանալու, քանի որ դպրոցի միջոցները ներում են։

Ի դիմաց ծնողների՝

Վ. Փիլիպոսեան

Թիֆլիս, օգոստոսի 29-ին

Արտասահմանում, գլխաւորապէս Շվէյցարիայում, մի ոմն, 18—20 տարեկան, երկար հասակով ու նիհար, դիմել է և շարունակում է դիմել այնտեղի հայերին և Փօրժ Կաֆիեվի անուան տակ փողեր է կորզում, ձևանալով իբրև քաղաքական յանցաւոր՝ փախած Կովկասից Պարսկաստանի վրայով արտասահման—Եւրոպա։

Արդէն մի շարք նամակներ ստացած լինելով Եւրոպայի այլ և այլ քաղաքներից՝ այս խարդախութեան զոհ գնացածներից, սրանով պատիւ ունիմ խոնարհաբար խնդրել յարգելի խմբագրութեանդ յայտարարել ի գիտութիւն հայ հասարակութեան, որ ես Փօրժ անունով տղայ չունիմ և որ արտասահմանում իմ երեխաներից ոչ ոք և երբէք չէ եղել։

Սարգիս Կաֆեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կովկասի Փոխարքայի զինւորական մասի օգնական գեն.-լ. Մ. Դ. Մալաման սեպտեմբերի 1-ին վերադարձել է Թիֆլիս։

Գեն.-նահանգապետի կարգադրութեամբ դադարեցված է «Обновленіе» լրագիրը։

Օգոստոսի 30-ին Բագուի պօստ-հեռագրատանը պարզվել է հետևեալ կեղծիքը։ «Кавказъ» հիւրանոցի սպասաւոր Պաւել Վօրօնինի անունով տրված կեղծ հաւատարմաթղթով օգոստոսի 23-ին ստացվել է Շուշից Ալէքսանդր Մկրտչեան Բօզեանցի անունով ուղարկված 3000 ր. արժէքաւոր կապոցը։ Կեղծ ստորագրութիւնը կատարել է մի ոմն Արտեմ Զուբարօվիչ Միլիք-Թանգիէվը. այդ պատճառով էլ նա Վօրօնինի հետ միասին 4-րդ մասի քննիչի հրամանով բանտարկված է։ Կալանաւորութիւնից առաջ խուզարկել են Միլիք-Թանգիէվի տունը և գտել են կապոցի իրեր 1600 ր. արժողութեամբ։ («Баку»)

Գործադուլ են արել Թիֆլիսի ջրաղացների և ալիւրի պահեստների բանւորները և ծառայողները ներկայացնելով իրանց տէրերին մի շարք տնտեսական պահանջներ։ Գործադուլ են արել նաև գլխարկների արհեստանոցների բանւորները, իրանց ներկայացրած պահանջներին բաւարարութիւն չը ստանալու պատճառով։

Հռչակաւոր գեներալ-Ալիխանովը արտասահման գնալուց առաջ 9 օր մնացել է Պետերբուրգում։ Նրա ճանապարհորդութեան ժամանակ մեծ նախազգուշութիւններ էին ձեռք առնվել։ «Н. П.»-ի ասելով, վագոնը, որով գնում էր նա, պահակների հսկողութեան տակ էր։

Թիֆլիսի քաղաքագլուխ իշխ. Ձերքեզով ստացել է գեներալ-նահանգապետից հետևեալ գրութիւնը. «Իմ թոյլտուութեամբ կայացած 10-րդ քաղաքամասի տնատէրերի ժողովում, որտեղ քննվելու է գիշերային զինված պահակախումբ հիմնելու հարցը, նախագահող Թիֆլիսի քաղաքային վարչութեան անդամ Խատիսեանը թոյլ էր տուել ոչ-տանտէր ուսանող Տէր-Ղուկասեանին ոչ միայն խախտել ժողովի կարգը, այլ և անխնայ ճառ արտասանել։ Որովհետև ժողովներում տեղի ունեցող եղելութիւնների պատասխանատուն նախագահն է, և ի նկատի ունենալով, որ պ. Խատիսեանը նախագահել է վարչութեան կարգադրութեամբ, հետևաբար իր դիրքով պարտաւոր է լըջօրէն վերաբերվել քաղաքի բարեկարգութեան և ապահովութեան հետ կապված քննվող հարցերին, խնդրում եմ ձերդ պայծառափայլութեան իմ անունից խիստ յանդիմանութիւն անել քաղաքային վարչութեան անդամ Խատիսեանին, զգուշացնելով, որ կրկնութեան դէպքում նա, որպէս անհամապատասխան իր կոչման, կը զրկվի պաշտօնից և, որպէս վտանգաւոր անձ, կը հեռացվի իմ գեներալ-նահանգապետութեան սահմաններից»։

Ստացանք հետևեալ գրքերը. 1) Թէօդոր դը Բանվիլլի «Սօկրատ և իր կինը», կատակերգութիւն մէկ արարուածով, թարգմ. ֆրանսերէնից Ա. Մ. Եղեկեանի, գինն է 20 կօպէկ ($^1/_2$ ֆրանկ). 2) Գ. Վանցեանի «Հայոց պատմութիւն» ծխական դպրոցների համար, պատկերազարդ, գինն է 40 կօպէկ։

Անդրկովկասի շէյխ-ուլ-իսլամը և մուֆթին այցելել են Վրաստանի էկզարխ Նիկօնին։ Էկզարխը իր հերթին այցելել է շիա և սիւննի հոգևորականութեան առաջնորդներին։ (Кавк.)

Հայ-թուրքական ընդհարումներից վնասված հայ ընտանիքների օգտին ստացանք Ղարսից՝ Երուանդ Տէր-Մինասեանի ձեռքով Ս. Յովակիմեանի տանը մի քանի անձնաւորութիւններից հաւաքած՝ 20 րուբլի։

Ստատս-սեկրետար բարոն Է. Իւ. Նօլդէն ֆինանսների մինիստրի մի նամակով տեղեկացնում է Փոխարքային, որ օղեգործարանատէրեր—Սողոմոնեանի, Խուբլարեանի, Բագդասարեանի և Փիլոսեանի միջնորդութիւնները՝ տալու պետական գանձարանից հայ-թուրքական ընդհարումների ժամանակ կործանված գործարանների արժէքը, չեն յարգվել ֆինանսների մինիստրի կողմից, ի նկատի ունենալով պետական գանձարանի ներկայիս անբարեյաջող դրութիւնը։

Նաւաստիների միութեան կենտրոնական կօմիտէտը Պետերբուրգից ուղարկել է նաւաստիների բոլոր միութիւններին, որոնց թւում և Բագուի նաւային մեքենայապետների ընկերութեանը, ընդհանուր ժողովի կայացրած որոշումը, որով հրաւիրվում են բոլոր միութիւններից պատգամաւորներ արհեստակցական կարիքների համար խորհրդակցելու։ Ընդհանուր համագումարը տեղի է ունենալու ներկայ թւի աշնանը։ Նաւային մեքենայապետների ընկերութիւնը դրա առիթով մի շարք ժողովներ է գումարում։

Բագւում հրատարակվող թուրքերէն «Հէյաթ» լրագիրը, որ դադարեցրել էր Թաղիեվը, օգոստոսի 31-ից նորից է սկսել լոյս տեսնել։

Մօտ օրերս «Աղբիւր-Տարազի» խմբագրութեան կից բացվում է գրական-գեղարուեստական սալօն, որը ամփոփում է իր մէջ դերասանների, գեղարուեստագէտների, գրականագէտների բիւրօ, ընթերցարան և ժողովարան։

Վերջին ժամանակներս բաւականաչափ ուժեղացել է հայրենասիրական կուսակցութիւնների գործունէութիւնը։ Շուտ-շուտ նիստեր են գումարում, քննում են «ձախակողմեան» կուսակցութիւնների գործունէութիւնը և մշակում են իրանց ապագայ տակտիկայի նախագիծը։ Միապետականները, որ մինչև այժմ բացասաբար էին վերաբերվում ժողովրդական ներկայացուցչութեանը, արդէն որոշել են եռանդուն մասնակցութիւն ունենալ նախնական ընտրութիւններին, որպէս զի բոլոր ոյժով դիմադրեն ծայրայեղ տարրերին։

Ոստիկանական դեպարտամենտը յատուկ շրջաբերականներով կարգադրել է ոստիկանութեանը, որ հրացանաձգութեան վարժութիւններ անել «ռուս ժողովրդի միութեան» անդամներին ևս չէ կարելի թոյլատրել, ինչպէս որ չէ թոյլատրվում յեղափոխական խմբակներին։

Սեպտեմբերի 1-ին Պետերբուրգի համալսարանում տեղի ունեցաւ ուսանողական ժողով։ Պրեզիդիումը ներկայացված է աւագների կողմից։ Գլխաւոր դահլիճում չը տեղաւորվեցին բոլոր ներկայ եղողները։ 1586 հոգի ձայն տուողներից մասնակցում էին 1203 հոգի։ Նախագահները վճռել են, որ համալսարանը պէտք է բացվի, իսկ ինչ վերաբերում է համալսարանում միտինգներ սարքելու հարցին, ընդունված է մի րեզօլիւցիա մեծամասնութեամբ ընդդէմ 17-ի—ժողովրդական միտինգները համալսարանում այժմ վաղաժամ են։ Հետևեալ ժողովը, զուտ ակադեմիական, նշանակված է սեպտեմբերի 5-ին, Սադովայա փողոցում, ուսանողական տան մօտ։ (Պետ. հեռագ. գործ.)

«Ժուռնալ» լրագրի Պետերբուրգի թղթակիցը հաղորդում է, որ գեներալ Տրեպօվի հրաժարականը կատարված իրողութիւն է։ Նրան փոխարինելու է գեներալ Կլէյգելսը կամ գեներալ Կաանգօզովը։

Համալսարաններին տրված իրաւունքը՝ սեմինարիական դասընթացները աւարտողներին ընդունելու համար, Կազանի համալսարանը, առանց մինիստրութեան հետ որևէ յարաբերութիւն ունենալու, տարածել է և այն սեմինարիստների վրա, որոնք անցել են միայն 4-րդ դասարանի դասընթացը։ Այդ հանգամանքը բաւականին թեկնածուներ է գրաւել դէպի համալսարանը։ Երբ պարզվեց, որ 4 րդ դասարանի վկայական ունեցող սեմինարիստները պէտք է քննութիւն բռնեն մաթեմատիկայից, ֆիզիկայից և նոր լեզուների որևէ մէկից, երիտասարդներից շատերը մնացին դժուար կացութեան մէջ. այդ պատճառով, մինիստրութիւնը աչքի առաջ ունենալով, որ թիւրիմացութեան շնորհիւ տուժում են անմեղ երիտասարդները, իբրև բացառութիւն՝ թոյլատրեց Կազանի համալսարանին այս տարի միայն առանց քննութեան ընդունել նշուած երիտասարդներին։

Ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, ֆինանսների մինիստրութիւնը ուղղակի հարկերի աւելացման հետ զուգահեռաբար մտադիր է ակցիզ նշանակել լուսաւորութեան համար գործադրվող էլէքտրական ոյժի վրա։ Այդ նախագիծը դժգոհութիւն է յարուցել գործարանատէրերի ու ֆաբրիկանտների մէջ. ուստի նրանք մտադիր են խնդրամատոյց լինել մինիստրութեանը ու բացատրել, որ նա կարող է արգելք դառնալ էլէքտրական լուսաւորութեան տարածմանը ազգաբնակութեան մէջ։

Մալօարխանգելսկի (Օրլովի նահանգում) գաւառական զեմստվօյի արտակարգ ժողովը կառավարութեանը խնդրամատոյց է եղել իրաւունք տալու կանանց մասնակցելու զեմստվօյին ընտրութիւններին տղամարդկանց հետ հաւասար իրաւունքներով. դրա հետ միաժամանակ՝ անշարժ կայքերի ժառանգութեան գործում կանանց իրաւունքները ևս հաւասարեցնել տղամարդկանց հետ։ Վերջին հարցի մասին խնդրելու շարժառիթը եղել է այն, որ ժառանգութեան իրաւունքի հաւասարեցնելը, իրաւական արդարութեան պահանջից զատ՝ հնարաւորութիւն է տալիս կանանց մեծ չափերով իրագործելու ընտրողների իրաւունքները, որովհետև ներկայումս ժառանգութեան մասին գոյութիւն ունեցող օրէնքների համաձայն կանանց մեծ մասը, ազգակցի մահից յետոյ, զրկվում է ընտրողական ցենզից։

Օգոստոսի 12-ին և 13-ին Բերդեանսկ քաղաքում տեղի է ունեցել Բերդեանսկ գաւառի ժողովրդական դպրոցների ուսուցչական համագումարը։ Համագումարում քննութեան առնվեց ժողովրդական ուսուցիչների տնտեսական ծանր վիճակը, որոնք ստանում են ամսական ընդամենը 25 րուբլի և շատ անգամ հնարաւորութիւն չունեն նոյնիսկ լրագիր էլ ստանալու։ Առաջարկութիւն եղաւ, որ համագումարը մի բանաձևով յայտնէ, որ անհրաժեշտ է ստիպել զեմստվօյին, որպէս զի աւելացվի ուսուցիչների ռոճիկը։ Սակայն մանրամասն քննութիւնից յետոյ կայացվեց հետևեալ բանաձևը. «Աչքի առաջ ունենալով, որ զեմստվօն ժողովրդական դպրոցների ռոճիկները աւելացնելով, նոր ծախքերով պէտք է ծանրաբեռնի ժողովրդի առանց այն էլ դատարկ գրպանը, ռոճիկները աւելացնելուց հրաժարվել»։ Համագումարը վերջանալուց յետոյ միտինգ կազմվեց համագումարի անդամների և կողմնակի անձերի մասնակցութեամբ, որտեղ քննվեցին ու մշակվեցին ժամանակակից լօզունգներ։

ԲԱԹՈՒՄԻ ՀԱՅԵՐԻՆ

(«Իվերիա»)

Ահա բազմաթիւ ամիսներ է, որ հայ և թուրք մղում են եղբայրասպան կռիւ։ Անթիւ զոհեր ընկան երկու կողմից։ Մի ժամանակ ծաղկած երկիրը այժմ աւերակ է դարձել։ Տներն ու տեղերը հրկիզված։ Կառավարութեան կողմից ուղարկված պատժողական արշաւախմբերը ժողովրդի կոտորածին վերջ չեն կարողանում տալ։ Խաղաղութեան և հաշտութեան խմբերը, երդումներն ու խոստումները ապարդիւն են անցնում։ Իսկ մենք այդ ջարդը դադարեցնելու համար մեր ձեռքից եկած ջանքն ու աշխատանքը խնայելու չենք։ Ես, որպէս մահմեդական, իմ կողմից դիմելով հայ եղբայրներին, խնդրում եմ մասնակցել մեր ցանկութեան՝ վերջ դնելու ջարդերին։ Խնդրում եմ, որ ձեր մէջ գտնվող անզուսպ ու անհամբերող մարդկանց խորհուրդ ու խրատ տաք և նրանց հետ կանգնենք միասին դէմ թշնամութեանը։ Որովհետև ես լսել եմ, որ Բաթումից բազմաթիւ օսմանցի հայեր Ղարաբաղ են գնացել, որպէս զի իրանց մարդկանց օգնելով խառնակութիւնը երկարաձգեն։ Հետևաբար հայ եղբայրներից նորից խնդրում եմ, որ աշխատեն այդ մարդկանց ետ կանգնեցնել այդ տեսակ գործերից։ Մէկ էլ՝ եթէ Բաթումից և ուրիշ տեղերից հայեր ուղարկվեն, վերջը անախորժ հետևանքներ կունենան։ Մենք, մեր կողմից, մեր մահմեդականներին խրատում, հրաւիրում ենք հաշտութեան։

Կոմենդանտի հրամանով Բաթումի շրջանից աքսորված՝

Ասլան-բեգ Աբաշիձէ

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ ԵՒ ԲՈՒԼՂԱՐԻԱ

Բ. Դուռը Կ. Պօլսի եւրոպական դեսպաններին վերջերս մի յիշատակագիր է ուղարկել, որով յայտնում է, որ Մակեդոնիայում կօմիտէտները նորից սկսել են շարժունութիւն ցոյց տալ և պատրաստութիւններ տեսնել նորից խլրտում առաջացնելու նպատակով։ Այդ յիշատակագիրն ամբողջովին յենվել է Սօֆիայի օսմանեան դիպլօմատիական գործակալի կողմից հաղորդված տեղեկութիւնների վրա։ Միևնոյն ժամանակ Բ. Դուռն օգոստոսի 14-ին շրջաբերական հեռագիր է ուղարկել արտասահման իր դեսպաններին, հրամայելով, որ անյապաղ հաղորդեն պետութիւններին, թէ Բուլղարիան պատերազմական մեծ պատրաստութիւններ է տեսնում Թիւրքիայի վրա յանկարծակի յարձակվելու նպատակով։ Միւս կողմից՝ Բուլղարական կառավարութեան՝ պատերազմական պատրաստութիւնների ձեռնարկներն այնպիսի մի իրարանցում է ձգել Եըլդըզ-Քէօշկում, որ հիմք կայ կարծելու, թէ սուլթան-Համիդը կը հրամայէ, որ Բ. Դուռը Բուլղարիայի պահանջներին զիջէ և կարճ ժամանակամիջոցում կարգադրէ անկախ մնացած առևտրական դաշնագրի, անցագրերի և ուրիշ այս կարգի հարցերը։ Միևնոյն ժամանակ՝ հանրածանօթ Նէջիբ Մելհամէն Կ. Պօլսից Մարիենբադ է գնացել Ֆերդինանդ իշխանի հետ տեսակցելու և նրան թիւրք-բուլղարական համաձայնութեան մի նոր ծրագիր ներկայացնելու համար։ Դիւանագիտական շրջաններում կասկածանքով են նայում Թիւրքիայի այդ զիջող վերաբերմունքին և կարծում են, որ դա սուլթանի կողմից մի պատրուակ է, որպէսզի Բուլղարիան մի առ ժամանակ յետ կանգնի այնպիսի գործողութիւններից, որոնք կարող են նպաստել մակեդոնական առանց այն էլ հասունացած հարցի շուտափոյթ լուծմանը։

Ապստամբութիւնը Կուբա կղզում.—Ապստամբութիւնը Կուբա կղզու վրա գնալով աւելի է աստիճանում ու մեծ չափեր ստանում։ Ինսուրգենտները չեն կանգ առնում ոչ մի բանի առաջ, աւերում են պլանտացիաները, քանդում են երկաթուղիները, որոնք պատկանում են անգլիական ընկերութիւններին։ Այդ բանը հարկադրում է օտարահպատակներին պաշտպանութիւն խնդրել իրանց կառավարութիւններից։ Այնտեղ գտնվող հիւսիս-ամերիկացի բազմաթիւ արդիւնաբերողները շարունակ դիմում են իրանց ֆեդերատիվ կառավարութեանը խնդրելով միջամտել։ Գերմանացի ծխախոտի պլանտատորները իրական պաշտպանութիւն չը գտնելով իրանց կառավարութիւնից, մտադիր են ուղղակի դիմել Բեռլին և խնդրել գերմանական պատերազմական մի նաւ ուղարկել պաշտպանելու իրանց շահերը։ Ապստամբները սպառնում են բոլորովին ոչնչացնել օտարահպատակների ստացուածքը, եթէ Կուբայի կառավարութիւնը յարաբերութեան մէջ չի մտնել մինչև սեպտեմբերի 10-ը (ն. ս.)։

Լուրերին նայելով ապստամբութիւնը սկսվել է նախ Սանտ-Եագօ գաւառում, և թէև այդ լուրը պաշտօնապէս հերքվեց, բայց յետոյ արդէն հաստատվեց։ Կարծում են, որ արևելեան մասի ապստամբութիւնը չափազանց զգալի է կառավարութեան համար։ Շարժումը սկսվել է Կարդենասից և Սենգօյից, ուր ապստամբների գլուխ է անցել անկախութեան համար մղած կռուի վետերան գնդապետ Կարլոս Դիւբուա։ Հաւաննայի մէջ առ այժմ հանգիստ է։

Մինչդեռ Կուբայի կառավարութիւնը շարունակում է շատ հանգիստ վերաբերվել սաստկացող շարժմանը և, ինչպէս երևում է, դարձեալ տրամադիր չէ նրան լուրջ նշանակութիւն տալու։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

1 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 սեպտեմբերի։ Արժանահաւատ բիւրօյի ասելով կադէտների համակայսերական համագումարը թոյլատրված չէ ժամանակաւոր կանոնների 17 յօդուածի հիման վրա, որովհետև դա կը լինէր կադէտների մի կուսակցութեան շարք, քաղաքական միտինգներ, և այդ մի շարք միտինգների առանձին թոյլատուութիւնը կառավարութեան կնիքով և գործողութեամբ պարզ դուրս գալ է նշանակում օրէնքի սահմաններից, առաւել ևս, որ համագումարի թոյլատուութիւնը խնդրել են այնպիսի անձինք, որոնք ստորագրել են Վիբօրգի կոչը, այսինքն, պարզապէս կատարեցին հակաօրինական գործ։ Դրա հետ միասին առարկվում է, որ Սարատովում՝ կուսակցութեան ժողովի թոյլատուութեան կը հետևէր ժողովի անդամների դեմօնստրատիվ կերպով միանալուն Վիբօրգի կոչին։ Համագումարի առիթով ոչ մի պայմաններ առաջարկված չեն՝ աչքի առաջ ունենալով դրանց աւելորդութիւնը ներկայումս գոյութիւն ունեցող որոշ օրէնքների առիթով։ Հողային բարեկարգչութեան և հողագործութեան գլխաւոր վարչութիւնը տալիս է հետևեալ բացատրութիւնը օգոստոսի 29 ուկազի առիթով։ Գիւղացիներին ծախելու համար նշանակված է 4 միլլիօն դեսեատին արքունական արօտատեղիներ, որոնք օգուտ էին բերում տարին 670,000 րուբլի։ Արքունական արօտատեղիների մեծ մասը կապալով գտնվում են գիւղացիների ձեռքին, և նրանց խնդիրքը գնելու այդ արքունական արօտատեղիները ցոյց են տալիս ապահովելու իրանց տիրապետութիւնը այդ հողերի վրա սեփականութեան իրաւունքով։

ՀԱՎԱՆՆԱ, 1 սեպտեմբերի։ Ամերիկական «Դէնվէր» ականանաւից ափ իջան 100 զինված նաւաստիներ և տեղաւորվեցին նախագահի պալատի դիմաց, Հավաննայում ապստամբութիւն ծագելու դէպքում առաջն առնելու համար։

ԼՈԴԶ, 1 սեպտեմբերի։ Երեկոյեան գաղտնի բաժանմունքից վերադարձող 3 գործակալների վրա փողոցում անյայտ անձինք կրակեցին։ Երկուսին սպանեցին, մէկը անվնաս է։

ԿԱԶԱՆ, 1 սեպտեմբերի։ Ուսուցչական ինստիտուտում տեղի ունեցած խուզարկութեան ժամանակ բացվեցին կեղծ անցագրերի մի պահեստ և թռուցիկներ։

2 սեպտեմբերի

ՄՕՍԿՎԱ, 1 սեպտեմբերի։ Անդրիեվին դատարանը արդարացրեց։

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 1 սեպտեմբերի։ Հավաննայում «Դէնվէր» ականանաւից ափ իջեցրած նաւաստիները յետ են կանչված։ ափում թողված են մի փոքրիկ պահակախումբ, ամերիկական միսիայի պահպանութեան համար։ Ապստամբութիւնը տարածվում է։ Շատ տեղերում ապստամբների զօրքերը ուժեղ են կառավարութեան զօրքերից։

ՊԱՎԼՕԳՐԱԴ, 1 սեպտեմբերի։ Գեներալ-նահանգապետի պարտաւորիչ կանոնների համաձայն գիւղական համայնքներում զինուորների պահպանութիւնը հասարակութեան վրա է դրվում. կողոպտման դէպքում հասարակութիւնը պատասխանատու է իր ստացուածքով։

ԿԻԵՎ, 1 սեպտեմբերի։ Բէլօցերկվի բանկի կողոպտման մասնակիցներից՝ Պաշկովի և Սմօլէնսկի մահվան դատավճիռը առաւօտեան գործադրվեց։

ԿՐԵՄԵՆՉՈՒԿ, 1 սեպտեմբերի։ Գեներալ-նահանգապետը յայտարարել է, որ այն արդիւնաբերական հիմնարկութիւններում, որտեղ կը գտնվի գաղտնի գրականութիւն, տէրերը տուգանքի կենթարկվեն։

ՄՕՍԿՎԱ, 1 սեպտեմբերի։ Առաւօտեան ժամը 5-ին Մազուրինի մահվան դատավճիռը գործադրվեց։

ՎԱՐՇԱՎԱ, 1 սեպտեմբերի։ (Պաշտօնակ. թղթակ.)։ Վերջին 3 ամսվայ ընթացքում Վարշավայում վիրաւորվել են 22 ոստիկաններ 6 ժանդարմներ, 27 զինուորներ. սպանված են 28 ոստիկաններ, 5 ժանդարմներ, 12 զինուորներ, ռումբերի պայթումներից սպանված են 6, վնասվել են 18 հոգի. թալանված են 98 գինետներ։

ՀԱՎԱՆՆԱ, 1 սեպտեմբերի։ Սինֆուէգօս ժամանեց ամերիկական յածանաւ և ափ հանեց մի գունդ։ Սինֆուէգօսը պաշարված է յեղափոխականներով։ Վնասվել են մի քանի ամրութիւններ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 սեպտեմբերի։ Ներքին գործերի մինիստրը ներկայացրել է մինիստրների խորհրդի քննութեան մի նախագիծ հնադաւանների (старообрядцы) և աղանդաւորների մասին։ Վերջիններիս մտադրվում է տալ հաւատքի դաւանութեան ազատութիւն, հոգևոր ծիսակատարութիւնների ազատ կատարումը, կազմելու հոգևոր ընկերութիւններ։ Նախագծի կանոնագրութեան դրված է կանոնների մի ցուցակ մտցնելու համար առանձին գրքերով, հնադաւանների և աղանդաւորների ծննդեան, պսակադրութեան և մահվան մասին։ Նարուսկի գաւառի Իվանովսկի կալուածքում նորից տեղի ունեցան հրդեհումներ. օգոստոսի 31-ին այրվեցին 5 սարայներ. վնասը հասնում է 25,000 րուբլու։ Չը նայած ստրաժնիկների ներկայութեանը կալուածքում, հրձիգութիւնները շարունակվում են։ Այսօր երեկոյեան այրվեցին Պետերբուրգի վագոնաշինարարական արհեստանոցների փայտեայ շինութիւնները։ Կրակը արագ տարածվեց և բռնեց ամբողջ մի վերստ տարածութիւն։ Վնասը առայժմ որոշված չէ։ Հրդեհի պատճառը պարզված չէ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ,
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺԻՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880
(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) միզասեռ. հ.:
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9 —10 ժ. աչքի, ներքին և նեարդային:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժ. հ.:
Հ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Ի. Կ. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Օ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.:
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—1 —2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.:

ԻՐԻԿՈՒՆՆԵՐԸ

Ա. Մ. ՓՈՊԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահատ.
Խ. Գ. ԱԲԵԱՆՑ 7—7 ժ. ներքին և երեխայոց հ.:

Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (գոնսուլիում) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերստեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նախասարդեան

Տիկին Ե. Ալմազովի

կանանց պրոֆեսիոնալ դպրոցում աշխատանքները սկսվել են՝ ձեռագործ արհեստի, ամեն տեսակի կար ու ձևի առարկաների համար. աշակերտուհիների ընդունելութիւնը շարունակվում է, ինչպէս և ընդունվում են կանանց զգեստների պատուէրներ: Աշխատում են յայտնի արհեստաւորուհիներ: Հասցէն՝ Нѣмецкая ул., противъ Реальнаго училища, տուն № 3.

1—1

Քաղաքից մեկնելու պատճառով մինչև սեպտեմբերի 8-ը վաճառվում են էժան և ընտրութեամբ՝

ՄԵՂՐԱՃԱՆՃԵՐ

փեթակներով: Ելիզավէտինսկայա փողոց, տուն № 130, Վ. Ա. Սարօ.

Բացված է բաժանորդագրութիւն

„ՋԱՅՆ“

շաբաթաթերթի, որը շուտով լոյս կը տեսնի:

Բաժանորդագինն է՝ Թիֆլիսում տարեկան 2 ր. 50 կ., դուրսը տարեկան 3 ր., արտասահման տարեկան 4 ր.: Ամսական Թիֆլիսում 20 կ., դուրսը 30 կ., արտասահման 40 կ.: Հատով Թիֆլիսում 5 կ., դուրսը 7 կոպէկ: Դիմել՝ Тифлисъ, редакція «Дзайнъ».

Խմբագիր՝ բժ. Տ. Իսախանեանց
Հրատարակիչ՝ Մ. Դօլուխանեանց

(Կ. Հ.) 1—3

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. ԹԱԴԵՈՍԵԱՆ

Վերադառնալով կովկասեան հանքային ջրերից վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը առաւօտեան 10—11., ժ. իսկ երեկոյեան 6—7 ժ.: Գրիբոյեդովսկայա փողոց, տ. 15, տելէֆօն № 1000.

(Ե. Հ. Կ.) 2—10

ԲԺԻՇԿ

Գ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ

Ներքին և երեխայոց հիւանդութիւններ, ժամանաւորապէս կրծքի:

Քննութիւն և բուժում X ճառագայթներով առաւօտեան ժամը 10—11 և երեկոյեան 5—7:

Քոչնեվսկայա փող. տ. № 7 (Վեջցելի հիւրանոցի մօտ): 15—30

ԲԺԻՇԿ

Լեւոն Օհանջանեան

Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիս և կաշուի հիւանդութիւնների: Ընդունում առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.: Կանանց և երեխաների համար 11—12 ժ.: Հասցէն անկիւն Գօլովինսկի պրօսպէկտի և Կադետսկայա փողոցի, տուն Թամամշեանի: Մուտքը Կադետսկի փողոցից № 2.

(Ա. Օ.) 223—300

ԲԺԻՇԿ

Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ

Մասնագէտ ներքին և երեխայոց հիւանդութիւնների առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ: Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առա. և 5—6 երեկ.

Միխայլովսկի պր. տ. Ճավճավաձէի № 36

(Կ.Հ.Ու.) 45—100

ՁԵՌՆԱՐԿ ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ

դասագրքերիս գները պակսեցնելու մասին ինձ եղած դիմումները ամենայն ուրախութեամբ յարգելով՝ յայտնում եմ, որ սոյն յայտարարութիւնից յետոյ միայն, և ոչ մինչև այժմ, աշխատութիւններս վաճառվելու են Թիֆլիսի Կենտրոնական, Կովկասեան և Գուտտենբերգ գրավաճառանոցներում հետևեալ գներով:

«Ձեռնարկ»	Ա. տարի.	փոխանակ 60-ի՝	45 կ.
	Բ. տարի.	» 40-ի՝	25 »
	Գ. տարի.	» 40-ի՝	25 »

«Մի պատյառ» փոխանակ 40-ի՝ 30 կ.
«Բարի մայր Մարիամը» վէպիկ 20-ի՝ 15 կ.

Արսէն ա. քահ. Բագրատունի

(օգ. 18, 24, 29 սեպտ. 3, 6, 12) 4—6

ՅՈՎՍԷՓ ՄԵԼԻՔ-ՋՀԱՆԵԱՆՑԻ

ԴՊՐՈՑ-ՊԱՆՍԻՕՆՈՒՄ

Ընդունվում են աշակերտներ՝ գիշերօթիկ և երթևեկ, որոնք պատրաստվում են բոլոր միջնակարգ դպրոցների համար: Աւանդվում են հետևեալ լեզուները՝ ռուսերէն, հայերէն, գերմաներէն, ֆրանսերէն և լատիներէն:

Тифлисъ, Гановская ул. № 7.

(սեպ. 1, „ և 5) 9—10

ԴՈԿՏ. Կ. ՓԱՇԱՅԵԱՆԻ

«Պատկերազարդ Ընդարձակ Դպրոցական Առողջապահութիւն»

Վաճառվում է մեր ԵՄԷՆ անունով Տուբեցկի-Կաֆէինի մագազինում, Գօլովինսկի պրօսպէկտ, տուն Անանովի:

ԳԻՆՆ Է 6 ՌՈՒԲԼԻ

ճանապարհածախսով:

Գաւառներից կարող են ուղղակի մեզ դիմել կանխիկ վճարով:

Մեզ մօտ վաճառվում են նաև Դոկտ. Կ. Փաշայեանի—Խանի Վիպական հաւաքածու-ները, խրաքանչիւրը—10 կոպէկ, ճանապարհածախսով—12 կոպէկ:

2—8 (Հ. Կ.) Ն. Թաթիկեան

Ներսիսեան դպրոցի շրջանաւարտ մի երիտասարդ

Որոնում է ուսուցչական պաշտօն հայոց եկեղեցական-ծխական դպրոցներում համաձայն է նոյնպէս Պարսկաստան գնալու: Ցանկանում է աւանդել հայոց լեզու, Թուաբանութիւն, պատմութիւն, կրօն: Դիմել՝ Կարս, Մարտիրոս Սահակեանին: (Հ. Ու. Կ.) 3—3

ԼՈՅՍ Է ՏԵՍԵԼ

ԱՐԻՒՆԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ

Դրամատիկական անցք մի գործող.
Հեղ. Պ. Հ. Լուազոնի
Թարգմ. Տր. Տ. Զաւէն

Դիմել՝ «Գուտտենբերգ» գրավաճառանոցին: 2—5

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

Թուաբանական խնդիրների ԺՈՂՈՎԱԾՈՒ

(Եւտուշեվսկուց և ուրիշներից քաղուած)
կազմեց Ս. Զորչոփեան
Գինն է 30 կոպ.:

Վաճառվում է հեղինակի մօտ Нахичеван н. Д. Θеодоровская ул. д № 12. 3—5

Գանձակում տեղի ունեցած բնդհարումների պատճառով ես տեղափոխեցի իմ կենտրոնական ՀԻՒՐԱՆՈՑԸ շքեղ կահկարասիներով Թիֆլիս, Պուշկինսկի փողոցի վրա № 23, պրավօսլաֆի հոգևոր սեմինարիայի դիմաց

„ՆՈՄԵՐԱ ՑԵՆՏՐԱԼ“

մականունով: Գները 70 կոպէկից մինչև 2 րուբլի: Ամսական ցանկացողների հետ առանձին պայմաններով:

Ալէքսանդր Յարութինով

(Հ. Կ. Ե.) 53—100

ՋՈՒԹԱԿԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Մ. Տ. ՎԱՍԻԼԵՎԻ

Պարապմունքների սկիզբն է սեպտեմբերի 1-ին և վերջը յունիսի 1-ին

Ուսման տարվայ վճարն է 90 րուբլի 2 կիսամեակներով

Ընդունելութիւնը օգոստոսի 29-ին, ամենայն օր, ցերեկվայ 10—1 ժամը և երեկոյեան 5—7½ ժամը: Грибоедовская, 5

(Ա. Օ.) 5—10

Օրինակելի մի բնտանիքում ցանկանում են

ՆԱԽԼԵՔՆԻԿՆԵՐ

(ուսանողներ)

Կարելի է դասերի կրկնութեամբ (ռեպետիրովկա):

Սուդեբնայա փող., տ. № 30. հարցնել կար և ձևի դպրոցում, վերին յարկում:

(Կ. Հ.) 2—2

ԹԱՒՐԻԶԻ

Արամեան և ս. Աննայեան երկսեռ ուսումնարանների համար

ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ

երկու ուսուցիչներ ռուսաց լեզուի և այլ առարկաների համար և մի ձեռագործի վարժուհի: Պայմանների համար հարցնել «Մշակ»-ի խմբագրատանը պ. Խանազադեանին: Ժամը 12—1 ը: (Հ. Ու. Շ. Կ.) 4—4

Զանգեզուրի գաւառի Լոր գիւղացի

ԳԱԲՐԻԵԼ ԽԱՉԱՏՐԵԱՆ ՍՏԵՓԱՆԵԱՆՑԸ

մեր խանութից գողացել է փող և ապրանք մօտ 150 րուբլու, որի հետ և ստանալիքների փաստաթղթեր. Ներկայացնելիս խնդրում ենք չը վճարել նրան: Բարեկամներին և ծանօթներին խնդրում ենք համոզել յիշեալ պարոնին գոնէ յետ դարձնել փաստաթղթերը:

Баку, Бюро газетъ, О. Газанчяну.

(Շ. Կ.) 2—2

ՀՐԱՒԷՐ

Նորին Վեհափառութեան կարգադրութեան համաձայն Կուկիայի Նորաշէն Ս. Աստուածածին եկեղեցու ծխականները երկու սեռից ևս 2-րդ անգամ հրաւիրվում են սեպտեմբերի 3-ին ցերեկվայ ժամը 12-ին որոշելու յիշեալ եկեղեցու գաւթում գտնված ծխական դպրոցի խնամակալ Ն. Գրիգորեանի իրաւասութեան սահմանները:

Աւագ-երէց՝ Ալէքսանդր քահանայ Տէր-Յովհաննիսեանց

(Հ. Շ. Կ.) 3—3

Մի երիտասարդ աւարտել է Գանձակի քաղաքային ուսումնարանի դասընթացքը և փափագում է ուսումը շարունակել, բայց միջոցները չեն ներում. խնդրում է բարերարներից կամ որևէ պաշտօն տալ, կամ նիւթականով օգնել: Հասցէն՝ Гудовича ул. № 10 д. Джабарова Хачатуру Лалаянцу. Для передачи Араму Теръ-Саакянцъ.

(Հ. Շ. Կ.) 3—3

ՀՐԱՒԷՐ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

ԿԱՐԼ ՄԱՐՔՍ

ԿԱՊԻՏԱԼ

ՀԱՏՈՐ I

Հայերէն լիակատար Թարգմանութեամբ եւ հրատարակութեամբ Ստրասբուրգի համալսարանի պետակ. եւ իրաւաբ. գիտութիւնների դօքտօր

ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑԻ

Պիտի սկսի տպագրել առաջիկայ յունվար ամսից:

Թարգմանութիւն գերմաներէն բնագրից, որը կազմում է մօտ 800 խիտ տպած մեծադիր էջեր՝ բազմաթիւ և մեծածաւալ ծանօթութիւններով և Մարքսի ու Էնգելսի չորս յառաջաբաններով:

Հատորը լոյս է տեսնելու 7 պրակներով՝ համեմատ հատուածների թւին, որոնց խորագրերն են՝

I—Ապրանք և փող (3 գլուխ), II—Փողի կապիտալ դառնալը (4 գլ.), III—Բացարձակ աւել-արժէքի արտադրութիւն (5 գլ.), IV—Յարաբերական աւել-արժէքի արտադրութիւն (4 գլ.), V—Բացարձակ ու յարաբերական աւել-արժէքի արտադրութիւն (3 գլ.), VI—Աշխատանքի վարձը (4 գլ.), VII—Կապիտալի կուտակման պրոցէսը (5 գլ.):

Ծանօթ. Գիրքը, բացի թէօրիական նիւթը անալիզներից, պարունակում է նաև տնտեսական զարգացման տեսութիւններ՝ գլխաւորապէս անգլիական կեանքից, որպէս տնտեսապէս ամենազարգացած երկրից:

ԲԱԺԱՆՈՐԴԱՎՃԱՐՆ է 3 րուբլի 50 կոպ. (=9 ֆրանկ) պոստի ծախքով միասին՝ այժմեանից մինչև առաջիկայ դեկտեմբերի վերջը բաժանորդ գրւածների և գինը վճարածների համար: Գիրքը լոյս տեսնելուց յետոյ՝ գինը զգալապէս կը բարձրացվի:

Բաժանորդագրութեան համար դիմել՝ Тифлисъ, книжная торговля «Гуттенбергъ» կամ հրատարակչին՝ Тифлисъ, А. М. Арасханянцу, Кадетскій пер. 11: Արտասահմանից՝ Tiflis (Russie, Caucase), Librairie «Guttenberg» և կամ Tiflis, A. M. Araskhaniantz, Kadetskî péréoulok 11.

Ամեն բաժանորդ՝ թէ Թիֆլիսից և թէ այլ տեղերից՝ կը ստանայ անդորրագիր:

(Կ. Հ.) 2—20

Լոյս տեսաւ

ԴԱՍԱԳԻՐՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ

Քաղաքական մաս

ԱՒՍՏՐԱԼԻԱ, ԱՖՐԻԿԱ, ԱՍԻԱ ԵՒ ԱՄԵՐԻԿԱ

Կազմեց՝ Լևոն Բաբայեան

Գինը 65 կոպ.

Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ «Гуттенбергъ». 5—5

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

ԳԾԱԳՐՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Հայոց դպրոցների համար

ՏԵՏՐԱԿ Ա.

ՈՒՂԻՂ ԳԾԵՐ

Պատրաստական դասընթաց
կազմեց՝ Գարեգին Լեւոնեան
Գինն է 20 կոպ.

Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ «Гуттенбергъ» 5—5

„Գուտտենբերգ“

գրավաճառանոցում ծախվում են

«Թուաբանական խնդիրներ և օրինակներ», Ա. մաս, փոխադրութիւն Ար. Սպարապետեանի	30 կ.
Նոյնը Բ. մաս	30 կ.
Նոյնը Գ. մաս	30 կ.

Գումարով գնողներին զեղջով

Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ «Гуттенбергъ». 8—10

Մակար Տէր-Սարգսեանի

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Գինը 30 կոպ.

ԴԱՍԱԳԻՐՔ ԳԾԱԳՐՈՒԹԵԱՆ

Գինը 50 կոպ.

Уроки чистописанія

Գինը 25 կոպ.

100-ից ոչ պակաս գնողներին 20% զեղչ:

Դիմել՝ Թիֆլիս—Կենտրոնական գրավաճառանոցին: Երևան՝ Յօրինողին:

6—10

„ՎԵՐՍԱԼ“ [ՀԻՒՐԱՆՈՑ]

Քաղաքի ամենակենտրօնական մասում

Վօրոնցովի արձանի մօտ,

ուր շաղկապվում են տրամվայի բոլոր գծերը: Համարները սկսած 1 րուբլուց և աւելի: Յարմար կերպով կահաւորված համարներ՝ բոլոր յարմարութիւններով: Բաղանիք, դուշ, տէլէֆօն, էլէքտրական լուսաւորութիւն ընդհանուր շինութեան մէջ: Օդի և լոյսի առատութիւն: Կատարեալ մաքրութիւն և կարգապահութիւն: Խնդրում ենք չը լսել գործակալներին, եթէ թէ ազատ համար չը կայ և այլն:

(Կ. Ե. Հ.) 16—24

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Համաձայն «Բօզարջեանց և Որդիք» Առևտրական Տան առաջարկութեան՝ սրանով յայտնում եմ Թիֆլիսի մանրավաճառներին, որ յիշեալ Տան գործարանի ծխախոտները վաճառվում են նաև ինձ մօտ, համաձայն թերթերում («Զանգ» և «Т. Листокъ») յայտարարված գների և յայտարարած օրից, այն է՝

Պապիրօսը I տես. 5 ր.—4 ր. 30 կ.
» II » 3 ր.—2 ր. 60 կ.
Ծխախոտը II » 1 ր. 44 կ—1 ր. 25 կ.:

Հասցէն՝ Головинскій просп., № 23, տուն Օրբէլեանիի, խանութ Գրիգոր Ֆարահեան:

(Ու. Շ. Կ.) 3—3

Քամալեանց Ս.-ի գրքերը

1) Խուլ Խաչիկ, պատմ. վէպիկ	25 կ
2) Սասունցի Յոհան, պատմ. վ.	30 կ.
3) Քաջ Աղասի, պատմ. վ.	25 կ.
4) Երկասիրութիւններ, ա. կապուկ	50 կ.
5) Գալօ Ախօ և Խաչան	12 կ.
6) Աստուած չը ճանաչող	10 կ.
7) Ժամանակը ոսկի, պատկերազարդ	40 կ.
8) Ծովինար	20 կ.
9) Երկու աղբերացեղ	30 կ.
10) Անմեռ աշխարհ	8 կ.
11) Շէն Թագաւորի աղջիկը	20 կ.
12) Աստուած աղքատի կերպում	20 կ.
13) Հէքիաթներ	30 կ.
Նոր լոյս տեսաւ՝	
14) Սրտից 9°պատմ., պատկերազարդ.	40 կ.

Դիմել՝ Թիֆլիսի գրավաճառներին կամ հեղինակին՝ Ներսիսեան դպրանոց:

(Հ. Կ.) 6—10

Լոյս տեսաւ և վաճառվում է

ԷՄԻՆ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ ՆՈՐ ՊԻԵՍԸ

ՍՈՒՐ ԵՒ ՀՈՒՐ

(Ո՞վ է մեղաւոր)

էպիզօդներ հինգ արար. եւ ապօթէօզով 1905 թ. հայ-թուրքական ընդհարումների րից

Արարուած I—Գիշատիչ թռչուններ. II—Դատապարտելի անհոգութիւն. III—«Շէյթանի» գործերից. IV—Մարմնացած թշնամութիւն. (կանգնել է Իսլամը) և V—Ակն ընդ ական:

Ապօթէօզ:

ԳԻՆՆ Է 1 ՌՈՒԲԼԻ

Միանուագ 10-ից աւելի կանխիկ վճարով գնողներին—20%, 30ից—25% և 50-ից—35% զիջում է լինելու:

Դիմել միմիայն հեղինակին այսպէս՝ Эривань, Эмину Теръ-Григорянцу.

(Հ. Կ.) 12—15

ԵՐԿՈՒ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

Մաթեմատիկոս և պատմաբան

(Լազարեան ճեմարան աւարտած)

Ցանկանում են ուսուցչական պաշտօն ստանալ հայոց դպրոցներում: (Ցանկալի է միևնոյն տեղում): Դիմել՝ Москва, Мал. Харитоновскій пер., д. Котова, кв. 10.

6—10

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼՈՒՄ

ՆԱԽԿԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ԴՊՐՈՑ

Ա. Արաբաջեանցի և պանսիօն Հ. Խաչատրբեանցի վերսկսում է երթևեկ և գիշերօթիկ աշակերտների ընդունելութիւնը:

Դպրոցի նպատակն է մատչելի գներով աջողութեամբ աշակերտներ պատրաստել առևտրական դպրոցը ընդունվելու համար:

4—5

Մի հայուհի, որը լաւ գիտէ ռուսերէն և ֆրանսերէն լեզուները, ցանկանում է ճաշի և սենեակի փոխարէն ինտելիգենտ ընտանիքում երեկոյեան պարապմունքներ ունենալ: Հարցնել «Մշակ»-ի խմբագրատանը: 3—5

Լոյս տեսաւ առաջին ապագրութեամբ

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆՑԻ

Ուսումն մայրենի լեզուի Չորրորդ գիրքը

Գինն է 90 կոպէկ:

Գլխաւոր պահեստը՝ «Գուտտենբերգ» գրախանութում, ուր վաճառվում են և առաջին, երկրորդ և երրորդ գրքերը: Հարիւրից ոչ պակաս գնողներին 25% զեղջ է լինում: Յօրինողի հասցէն՝ Лермонтовская № 4.

2—10

Եղեգիայի ծխական դպրոցի համար արդէն վարձված են ուսուցիչներ. պատասխան չը ստացողներն ազատ են:

Ի դիմաց հոգաբարձութեան՝
աւագ ուսուցիչ՝ Պօղոս Պօղոսեանց

Հաղբուբի հայոց օրիորդաց դպրոցի համար ՀԱՐԿԱՒՈՐ է ռուսերէն և ձեռագործի մի վարժուհի ցենզով: Դասագինը գլխաւոր առարկաների համար քսան րուբլի, երկրորդական առարկաների համար տասնհինգ րուբլի: Բնակարան, վառելափայտ և ծառայ:

Դիմել՝ Ванкъ, Теръ-Восканянцу.

4—4

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային գնացքների երթևեկութիւնը)

(Ժամերը հաշուած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով).

	Փօստային	Մարդատար.	Արագ.	Ապր…
Բագուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ. 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր.
Թիֆլիս հասնելը	11 » 26 » »	5 ժ. 25 ր. առ.	1 ժ. 30 ր. գիշ.	9 ժ. 37 ր.
Թիֆլիսից դուրս գնալը	12 » 26 » »	6 ժ. 01 ր. առ.	—	—
Թիֆլիսի ժամանակով)	1 » 24 » »	6 ժ. 59 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 38 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 22 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 39 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 37 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 35 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր.
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր.
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր.
Կարսից » »	8 » 57 » »	—	—	3 ժ. 1[illegible] ր.
Ալէքսանդրօպոլից դուրս գալը	7 » 38 ր. եր.	—	—	7 ժ. 06 ր.
Թիֆլիս հասնելը	5 » 06 » առ.	—	—	4 ժ. 49 ր.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 12 » գիշ.	—	—	3 ժ. 25 ր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 10 » »	—	—	4 ժ. 23 ր.
Ալէքսանդրօպոլից դուրս գալը	10 » 30 » առ.	—	—	2 ժ. 47 ր.
Երևան հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	6 ժ. 10 ր.
Կարս հասնելը	4 » 23 » »	—	—	8 ժ. 48 ր.

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

(Тифлисъ, Сололакъ, Лермонтовская ул. № 15)

Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութ… տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատեստատներ:

Աւանդելի առարկաները սրանք են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն. 2) Առևտրական Թուաբանութիւն. 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային). 4) Թուաբանութիւն համրիչի վրա. 5) Առևտրական Թղթակցութիւն. 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) Գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը:

Ձրի ուսուցումն ցանկացողներին գրող մեքենայի վրա: Պարապմունքները կուրսերում լինում են ամեն օր:

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից: Ամենայն օր, առաւօտեան ժամը 10-ից մինչև 12-ը, և երեկոյեան 4-ից մինչև 6 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Ալէքսանդր Փրիդօնովի տանը № …, Սերգիեվսկայա և Լերմօնտովսկայա փողոցների անկիւնում: Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաքաղաքացիք դիմում են՝ С. П. Мануэльянцу. (Կ. Հ.) 16—25

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

Գ. ՎԱՆՑԵԱՆԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ

1) Լոյս տեսան. համառօտ «Պատմութիւն հայոց», պատկերազարդ, ծխական դպրոցների համար	50 …
2) ՓՈՔՐԻԿ, «Գրպանի ուղղագրութիւն»	5 …
3) «Պատմական քերականութիւն» աշխարհաբարի, մեծերի համար	75 …
4) «Դպրոցական քերականութիւն», ստորին դասարանների համար	25 …
5) «Հայ հեղինակներ», Բ. տպ., մեր բոլոր յայտնի հեղինակների կենսագրութեամբ	1 …

Դիմել՝ Тифлисъ, Коммерческое училище, Ванціанъ և կամ գրավաճառներին

Գումարով առնողներին 20% զեղջ:

(Ե. Հ. Կ.) 10—20

ՆԿԱՐԻՉ Բ. ՃԷՊԷՅԵԱՆԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

Պատկերների, խաչվառների, խաչկալների եւ ոսկեզօ…

արհեստանոց. ընդունվում են ՄԻԱՅՆ պատուէրներ: ՉՈՒՆԵՒՈՐ եկեղեցի…

տրվում է ապառիկ

Պատուէրները կատարվում են ընտիր ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱԿՈՎ

Тифлисъ, Косая ул № 9, Б. Джебеяну. ցուցակը և պայմանները ուղարկվում են…

(Հ. Կ.) 5—5

Ֆինանսների նախարարութեան իրաւասութեան տակ գտնվող

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների նախարարութեան ուսումնասիրական բաժնի… մից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և … գրադարաններում:

ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ

Երկու սեռի անձանց՝ գործնական ձևով հաշուապահութիւն 4 ամսում:

Ներկայ տարվայ կուրսերում բացի սովորական մասնագիտական առարկաների աւանդվելու է ձրիաբար քաղաքական տնտեսութիւն (политическая эконом… և որոշ վճարով կամաւոր սղագրութիւն (стенографія):

Ընդունելութիւնն ամեն օր ժամը 5-ից մինչև 7-ը երեկոյեան և 9-ից մինչև 1… առաւօտեան: Պարապմունքները սկսվելու են սեպտեմբերի 15-ից, պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ: Ծրագիրն ուղարկվում է ձրի:

Դասընթացը աւարտողներին տրվում են ֆինանսների նախարարութեան … տրված ծրագրի համաձայն, ատեստատներ:

Դրանից անկախ, բացված է բիչ պատրաստութիւն ունեցող անձերին ամար առա… լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և թուաբանութեան համար:

Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի … նադրին Թիֆլիսում Н. В. Абраамяну, Николаевская ул. № 22, ամենայն օր…

Վերևում յիշած ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոց… րում: Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին … ռանց պօստի ծախս վճարելու. ԳԻՆՆ է 3 ր. 50 կոպէկ: (Հ. Կ. Ե.) 20…

Ալէքսանդրօպօլի Քաղաքային Վարչութիւն…

փնտրում է այնպիսի անձինք, որ ցանկութիւն յայտնեն գրաւել հետև… տօ ները Ալէքսանդրօպօլի քաղաքային վարչութեան մէջ.

I. Հիւանդանոցի հակեց-բժիշկ.	տարեկան ռոճիկ…
II. Սովորական բժիշկ.	» »
III. Դպրոցի ֆելդշէր.	» »
IV. Զօրավաշտի ֆելդշէր.	» »
V. Մանկաբարձուհի-ֆելդշէր.	» »

Առայժմ հիւանդանոցում կան 10 մշտական մահճակալներ. մօտիկ ապագայում… ների թիւը հասցնվելու է 20-ի: Հիւանդանոցին կից ամենայն օր տեղի է ունեն… հիւանդների ընդունելութիւնը:

Ցանկացողների յայտարարութիւնները ընդունվելու են անձամբ և պօստով … сандрополь Эрив. губ. Городской управѣ) մինչև սոյն տարվայ դեկտ. 10-ը և ոչ … նոյն տարվայ օգ. 20-ը պատասխան կուղարկվի բոլոր գրութիւններ ներկայացնող…

Ցանկալի է, որ հրաւիրվողները աշխատանքի կպչեն սոյն տարվայ նոյեմբերի 1-…

(Հ. Կ. Հ.) 5—5

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

դասագիրք ստորին դասանների համար

յօրինեց Մ. ԱԲԵՂԵԱՆ, ուսուցիչ ս. Էջմիածնի Գ. ճեմարանի

Գինն է 75 կոպէկ:

Դպրոցների համար, եթէ անմիջապէս հեղինակից առնուան 25 օրինակ գնելու … 75 կոպէկի տեղ 50 կոպէկ: Ճանապարհածախսը (25 օրինակի համար պօստի փաթեթ… րուբլի) գնողների վրա է: Պէտք է վճարել կանխիկ, կամ պատուէր տալ վերադիր … Պատուէրներն անյապաղ և ճշտութեամբ կը կատարվեն: Դիմել՝ Эчміадзинъ, Академ… нуку Абегянъ, կամ Թիֆլիսի գրավաճառներին:

(Ե. Հ. Ու. Կ.) 9…

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.

Электропечатня, Типографскаго Т—ва. «ГЕРМЕСЪ» Мадатовская ул. № …